ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ ԹԻՒ Է. **1870** ՆՈՅԵՄԲԵՐ

ԿՐՕՆԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ

Բարձրագոյն աստիճանները

Հայաստանեայց սուրբ Եկեղեցին խորհրդաւոր ու դեղեցիկ կերպով մը կ'յիշատակէ իւր նեղքին և արտաքին կառավարութեան կերպը՝ երբ իւր որդւոցը կը սովրեցնէ օրհնել զԱստուած այսպիսի եր գաբանութեամբ. "Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր Աստուած զքո սուրբ զԵկեղեցի": Յայտնի է ուրեմն որ այս կարգաւորութիւնը Աստուածային կ'համարիմք և Առաքելական՝ գոնէ ըստ զըլխաւոր մասանց, և ասոր զլխաւոր ապացոյցներէն մեկն է և այն՝ որ ամենայն եկեղեցիք Քրիստոնէից նոյն կարգաւորութեամբ վարուած են Առաքելոց ատեն մինչև յերրորդ և՝ ի չորրորդ դար. Հետագայ դարերուն մէջ ալ՝ առանց նոյն կարգաւորութեան էական և գլխաւոր մասերը փոփոխելոյ՝ ուրեմն զարդարեր ու սպայծառացուցեր են պէսպէս խորհրդաւոր և հարկաւոր պարագաներովն:

Ինչպէս որ ամենայն արտաքին և քաղաքական բարեկարգ կառավարութեան մէջ զանազան աստիճանի պաշտօնեայք կ'գտնուին, այսպէս ալ Եկեղեցւոյ կառա-

վարութիւնն կամեցեր է Աստուած դաս դաս պաշտօնէից յանձնել, որոնք կարգաւ իրարմէ կախումն ունենալով՝ մի և նոյն նպատակին, այսինքն Եկեղեցւոյ բարեկարգ կառավարութեանը կծառայեն: Եւ այս աստիճաններուն գլխաւորներն ու էականներն անոնք են, որ Քրիստոսի ընդհանրական Եկեղեցւոյն մէջ ամեն ժամանակ այնպէս ճանչցուած են, և են այս երեքը, Եպիսկոպոսութիւն, Քահանայութիւն, և Սարկաւագութիւն, և սոքա միշտ Առաքելական ձեռնադրութեամբ կատարին կամ պէտք է տրուին արժանաւորաց: Եպիսկոպոսները իրրև յաջորդք առաքելոց՝ կառավարիչք են եկեղեցւոյն Աստուծոյ, ինչպէս որ յայտնի է նաև իրենց անունէն, որովհետև Յունական Եպիսկոպոս բառը վերատեսուչ կամ վերակացու կնշանակէ. և սոքա կձեռնադրեն քահանաներ ու սարկաւագներ, եկեղեցւոյ խորհուրդները հաւատացելոց մատակարարելու և զանոնք հովուելու համար. նմանապէս քահանայից կամ երիցանց սպասաւոր և օգնական կձեռնադրուին եպիսկոպոսէն սարկաւագները, որոց Յունական անունը (διάκονοι) կթարգմանուի պաշտօնեայ:

Ուրեմն ի՞նչ է արդեօք պատճառն, որ դրեթէ ամենայն եկեղեցական դրոց մէջ ինը աստիճան կհամարուի եկեղեցական դասակարգութիւնը, որ և կըսուի եկեղեցական հաճախայաստիճանութիւն, նուիրապետութիւն, և նահապետութիւն ալն, թէպէտ և այն աստիճաններուն ճիշդ որոշ մտնելը ամենայն եկեղեցեաց մէջ և ամեն ժամանակ միօրինակ չէ պահուած. և ինչո՞վ կզանազանին իրարմէ այս աստիճանները:

Այս հարցման ընդարձակ պատասխանը եկեղեցական իրաւագիտութեան մէջ կրնայ գտնել. մեք բաւական համարիմք - առայժմ - ամնպզրոյս սահմանին դուրս չելնելով՝ այնքան միայն բացատրել՝ որքան որ օգտակար կ'տեսնեմք ընթերցողաց տարակոյսը լուծելու, և քանի մի ամիս առաջ ազգային լրագրաց մէջ եղած անհամաձայն կարծիքները ըստ կարի համաձայնեցնելու համար:

Եւ նախ այս է հարկաւոր գիտելին՝ որ եկեղեցական աստիճանները թէպէտ և ինը հատ համարուին, բայց ամենն ալ հաւասար չեն այն կերպով՝ ինչ կերպով որ հաւասար կհամարուին նիւթական սանդուխի մը աստիճանները կամ ոտքերը, հապա երեքը, որ վերն ալ յիշեցինք, թէ ղօրութեամբ կամ ներքին իսկութեամբ, և թէ պատուով կամ արտաքին իշխանութեամբ կզանազանուին միմեանցմէն, այնպէս որ եկեղեցւոյ դասակարգութեան աստիճանները եթէ միայն համրողներն ալ չեն սխալիր՝ երբոր անոր ներքին ղօրութիւնը միայն հաշուի կդնեն, և կըսեն թէ եպիսկոպոսութիւնը, քահանայութիւնը և սարկաւագութիւնը միայն են գլխաւոր աստիճան, և միմեանցը անոնց դրեթէ ըստորաբաժանումն: Եւ յիրաւի, Եկեղեցւոյ արտաքին բարեկարգ կառավարութիւնը բնական կերպով պահանջէր է, մանաւանդ քրիստոնէական սուրբ հաւատոյ բոլոր աշխարհք տարածուելէն ետքը, —որ եղաւ չորրորդ դարուն սկիզբները, մեծին Կոստանդիանոսի ի քրիստոնէութիւն դառնալովը,—երբ Եկեղեցւոյ Հայրապետները հարկ համարեցան նոյն իսկ Հիմիկոյ սուրբ ժողովոյն մէջ կանոններ

դնել նաև եկեղեցական դասակարգութեան աստիճաններուն համար, և բարձրադոյն աստիճանաց իրաւունքները որոշել:

Սուրբն Դիոնեսիոս Արիսպագացի՝ Պօղոս Առաքելոյ աշակերտը՝ երկնային նուիրապետութեանց այսինքն հրեշտակաց վրայ խօսելով, ընդարձակ բանիւ կ՚վարդապետէ ու կաւանդէ մեզ՝ թէ ինը դասք են հրեշտակաց, այսինքն Ելիոռք, Վերովբէք, Սերովբէք, Տէրութիւնք, Օրհութիւնք, Իշխանութիւնք, Պետութիւնք, Հրեշտակապետք և Հրեշտակք: Երդ այս վարդապետութիւնը ընդունելի լինելով տիեզերական եկեղեցւոյն Քրիստոսի՝ իբրև հիմնեալ սրբոյն Պօղոսի բացայայտ խօսքերուն վրայ, սուրբ Հայրապետներն ալ, որ եկեղեցւոյ կառավարութիւնը հրեշտակային դասուց կարգաւորութեանը կնմանեցընեն, նոյնպէս ինը աստիճան բաժնած են եկեղեցւոյ բոլոր մեծ և փոքր աստիճանները: Ասյս բանս կ՚բացայայտէ և Լամբրոնացին ասելով. ,,Եկեղեցի քրիս-
,,տոնէից . . . ի դասակարգութիւն համե-
,,մատութեան երկնաւոր քահանայապե-
,,տութեանցն ուղղեաց զկանոն և զաս-
,,տիճան պաշտօնէից իւրոց . . . որպէս
,,զի լեցի և աստ ինն դասակարգութիւնն
,,պաշտօնէից Աստուծոյ՝ զանազան պատ-
,,ուով և իշխանութեամբք,,:

Նոյն Լամբրոնացին ղդուշանալով՝ որ չկարծուի թէ այս ինը աստիճանները ոչ միայն պատուով և իշխանութեամբ կը զանազանին իրարմէ, այլ և ներքին զօրութեամբ, առաջ երեք զլեաւորները զատելով միւսներէն՝ նախապատիւ կհամարի, և այսպէս կմեկնէ Պօղոս Առաքելոյն խօսքը թէ, ,,Ոմանք գիտելով խոր-
,,հըրդոյն Քրիստոսի քահանայապետին
,,Պօղոս, յերիս մասունս ըստ սոցա որո-
,,շեաց ասելով. Որոս եղ Աստուած յն-
,,կեղեցւոջ՝ այս են. նախ զԱռաքեալս.
,,որք են Եպիսկոպոսք. երկրորդ զՔա-
,,հանայս, որք են Քահանայք. երրորդ
,,զԱրդապետս, որք են Սարկաւագքն,,:

Ասյս ըսելէն ետքը եկեղեցական դասակարգութեան ինը աստիճանները ալ մի առ մի կբացատրէ՝ հանդերձ անոնց իշխանութիւններովը: Ինչպէս որ խօսքերուն ընթացքէն և նոյն իսկ բառերէն յայտնի կերևի, այս բացատրութիւնները՝ ի Յունաց առնուած են մեր մէջ, և Լամբրոնացին նոյն կերպով մէջ կբերէ, կամ թէ ինքը Լամբրոնացին Յունարէն թարգմանած է: Եւ թէպէտ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ ևս ընդունուած է եկեղեցական դասակարգութեանց այս տեսակ բաժանումը, և այն ոչ թէ միայն Լամբրոնացւոյն ժամանակէն, այլ շատ դարերով յառաջ քան զնա, այսինքն գէթ Ե-ԶԴ-ին Դերսիսի Կաթողիկոսութեան օրերէն, սակայն աւելի պարզ և աւելի սովորական կհամարուի այժմ այս բաժանումը՝ որ Լամբրոնացւոյն օրերէն յետոյ ընդուներ կամ կարգադրեր է մեր Եկեղեցին, այսինքն Ա.) Կաթողիկոսութիւն, Բ.) Եպիսկոպոսութիւն, Գ.) Քահանայութիւն, Դ.) Սարկաւագութիւն, Ե.) Վիսամարկաւագութիւն. (որք կըսուին սովորաբար ՃԵՃ ասպիճան. իսկ մնացեալ չորսը ֆոփ ասպիճան, որ են) Զ.) Ջահընկալութիւն, Է.) Երդմնեցուցչութիւն, Ը.) Ընթերցողութիւն, և Թ.) Դռնապանութիւն: Ասյսու ամենայնիւ բարձրագոյն աստիճանաց վրայ եղած տեղեկութիւնները բա-

ական հետաքրքրական են, և Լամբրոնացւոյն համրած դասակարգութիւնը անտարակոյս հին է և մեծապէս պատկառելի, թէպէտ և այժմու սովորական դասակարգութենէն կզանազանի։ Այսն զի շատ նշանաւոր է Յովհաննէս պաթողիկոսին այն խօսքը, որով Արծին Տերսիսի երջանիկ բարեկարգութիւնները պատմած առնելը կըսէ. ,,Նա այսպէս ապա նահապետու-
,,թիւն խորհրդոյ եկեղեցւոյ ի մերում
,,աշխարհի լցաւ բովանդակաբար՝ ինն մի-
,,անգամայն դասակարգութեամբ պատ-
,,ուեալ։ Զգլխաւորս Եպիսկոպոսացն
,,Պարց և Ղազարայից Եպիսկոպոս ընդ
,,ձեռամբ նորա (պատրիարքին կամ պա-
,,թողիկոսի) կարգեալ. իսկ ի Սեբաստիա
,,և ի Մելիտինէ և ի Մարաիրոսաց քա-
,,ղաքին Մեթրապոլիտս կացուցանէին. իսկ
,,Եպիսկոպոսունս ապա ըստ որոշեալ վե-
,,ձակացն իւրաքանչիւրոցն հաստատէին,
,,և Չահանայս և Սարկաւագունս և կի-
,,սարկաւագս, և վերծանողս և սաղմոսեր-
,,գուս։ Եւ յառքիկ ցան և ցիր ընդ բոլոր
,,եկեղեցիս Հայաստանեայցս վայելչապէս
,,յարդարեալ լինէին ի փառս Աստու-
,,ծոյ,,։ Պատմաբանին այս խօսքէն յայտնի կաեանուի, որ մեր սուրբ Եկեղեցւոյ մէջ ալ նուիրապետական դասակարգութեան աստիճանները հին առեն ըսա Յունաց և Լամբրոնացւոյն համրածին պէս են եղեր, այսինքն Պատրիարքութիւն կամ Պաթողիկոսութիւն, Արքեպիսկոպոսութիւն, Մետրապոլտութիւն, Եպիսկոպոսութիւն, Չահանայութիւն, Սարկաւագութիւն, Կիսասարկաւագութիւն, Վերծանողութիւն և Երգեցողութիւն կամ Սաղմոսերգութիւն։

Նոյն դասակարգութեան մէջ աստիճաններն են որ Լամբրոնացին աւելի ընդարձակ ոճով կատարգրէ, և մեք հարկ կհամարիմք այս տեղ միայն անոնց բարձրագոյն աստիճաններուն վրայ խօսիլ։ ,,Երդ առաջին աստիճանն է յեկեղեցի,
,,կըսէ Լամբրոնացին, զոր Պապբեպբ+ա,
,,որ թարգմանին առաջին հայր+, այսինքն
,,Հայրապետք . . . և գործ և իշխանու-
,,թիւն է պատրիարքին ձեռնադրել զԵր-
,,քեպիսկոպոսս՝ որք են ընդ իւր վիճա-
,,կաւ,,։ — Պատրիարքական իշխանութեան ծագումը և անոր համար եղած խնդիրները աւելորդ կհամարիմք մէջ բերել. միայն թէ հարկաւոր է գիտնալ, որ Հայաստանեայց Եկեղեցւոյ պատրիարքին (ինչպէս նաև Ասորւոց պատրիարքին) Պաթողիկոս այսինքն ընդհանրական անունը տրուած է իբրև նախադահ կամ մեծ պատրիարք կամ ընդհանրական հոգևոր Գլուխ ազգի։ Յայտնի է որ այս անունը սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին և նորա յաջորդաց սեպհական պատուանունն ճանչցուած է, թէպէտ և պաթողիկոսները երբեմն պարզապէս Պապբեպբ+ կամ Հայրապետք ըսուած են։ Աւստի ամենայն պաթողիկոս կրնայ ըսուիլ նաև պատրիարք, Հայրապետ, Եպիսկոպոսապետ, Չահանայապետ, Աս և Արքեպիսկոպոս. բայց ոչ ամենայն պատրիարք կամ Արքեպիսկոպոս կրնայ ըսուիլ Պաթողիկոս. վասն զի, ինչպէս որ Լամբրոնացին ալ կըսէ, ,,Գործ և իշխանութիւն է պատ-
,,րիարքին ձեռնադրել Արքեպիսկոպոսս՝
,,որք են ընդ իւր վիճակաւ. և ի չորս
,,դաժին ամենեցայն նոքա տան հրաման
,,վասն ժողով լինելոյ,,։ Այս չորս եպիսկո-

ընելուն պատճառն այն է, որ իսկզբան չորս Աւետարանչաց աթոռներուն Ընթեպիսկոպոսները կամ եպիսկոպոսները պատրիարք ըսուեցան. ,,Պ՚ասն զի նախ Մատ-
,,թէոս գրեաց զԱւետարանն յԱնտիոք,
,,կըսէ Լ՚ամբրոնացին, պատրիարքն Ան-
,,տիոքայ զնախատպատուութիւն ունի քան
,,զայլն. իսկ յետ նորա Մարկոս յԱղէք-
,,սանդրիայ (գրեաց). յաջորդ սորա
,,պատրիարքն յետ սորա դասակարգե-
,,ցաւ. և Պ՚ուղոս՝ի Հռոմ գրեաց, որ
,,Հռոմայն է (պատրիարք) ըստ կարգի եր-
,,րորդ եր պատուով, թէպէտ և զօրու-
,,թեամբ (այսինքն արտաքին միայն իշխա-
,,նութեամբ) առաջին: Եւ Յովհաննէս
,,Հուսկ յետոյ յԱփեսոս գրեաց. որ նո-
,,րայն եղև պատրիարք՝ վերջին աթոռով
,,քան զերիսն: Եւ յս կարգաւորութեամբ
,,վարեցաւ եկեղեցի սրեղերաց մինչև՝ի
,,ժամանակս Յուստինոսի թագաւորի
,, . . . բայց Յուստինոս իբրև թագա-
,,ւորեաց, կամ եղև նմա փոխել զաթոռ
,, սրբոյն Յովհաննու յԱփեսոսէ՝ի պոս-
,,տանդնուպօլիս, և հաւանեցուցեալ զժո-
,,ղով եպիսկոպոսացն՝ կատարեաց զնոյնն:
,,Եւ Յուստինոս զարձեալ փոխեաց
,,զԱթոռն Մարկոսի յԱղէքսանդրէ յՀ-
,,րուսաղէմ,,: Թէ այս խօսքն և թէ եկեղեցական պատմութենէն յայտնի է որ մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայրապետը իրաւամբ ըսուած է պապրիպ+ ամեն ժամանակ, մանաւանդ մեծն Ներսէս և նորա յաջորդները մինչև ցայսօր: Իսկ Երուսաղէմի և պոստանդնուպօլսոյ Հայոց Ընթեպիսկոպոսները պապրիպ+ ըսուած են յետին ժամանակներս՝ի պատիւ՝ մէկը Երուսաղէմի, որ քաղաք է երկնաւոր Թագաւորին, և միւսը պոստանդնուպօլսոյ՝ որ կըսուէր Թագաւորեալ քաղաք: Նոյնպէս պատուանուն կարելի է համարել Սսոյ և Աղթամարայ Ընթեպիսկոպոսաց կաթողիկոս անունը. բայց ասոնց ծագման և իրաւանցը կամ իրաւասութեանը վրայ խօսիլը ուրիշ տեղւոյ կթողուինք: Գանք եկեղեցական դասակարգութեան միւս դիտաւոր աստիճաններուն:

Ըստ Լ՚ամբրոնացին թէ, ,,Երկրորդ
,,դաս աստիճանի եկեղեցւոյ են Ըպիսկո-
,,պոսք, որք թարգմանին եպիսկոպոսա-
պետ կամ առաջին եպիսկոպոս,,: Այս պապիսկոպոս անունը աւելի Երևելեան եկեղեցւոյ, մանաւանդ Յունական եկեղեցւոյ մէջ գործածուած է հին ատենը՝ քան թէ Երևմտեան եկեղեցւոյ կամ Լ՚ատինացւոց մէջ: Ոյնք կհամարին որ իրենց սովորութեամբը արքեպիսկոպոսական իրաւասութիւնը միշտ կար, որովհետև մեծամեծ եպիսկոպոսները իրաւունք ունէին իրենց ձեռքին տակը եղած եպիսկոպոսները ժողովի կանչելու, և ժողովոյն մէջ նստելու, նմանապէս եպիսկոպոսները իրաւունք ունէին արքեպիսկոպոսին ատեանը քողքելու. բայց այս պատուանունին գործածութիւնը չորրորդ դարուն մէջ միայն սկսաւ յաճախել, և առաջին պապիսկոպոս ըսուողը կհամարուի սուրբն Աթանաս: Մեր մէջ թէպէտ կաթողիկոսն ալ ըսուած է Ծէծ պապիսկոպոս, բայց երբ մեծին Ներսիսի ժամանակը մեր աթոռը պատրիարքական ձանձրացաւ, այն ատեն պատրիարքին՝ այսինքն կաթողիկոսին ձեռքին տակը մէկ քանի աթոռներուն եպիսկոպոսները միայն ըսուեցան պապիսկոպոս, ինչպէս Ընթեպիսկոպոս Ընդա-

նից, Արքեպիսկոպոս Հ֊իրակայ կամ Ե֊նուոյ ևլն։

Յետ ժամանակաց այս պատուանունը տրուեցաւ զլեաւոր վիճակաց Առաջնորդներուն, մանաւանդ անոնց՝ որոց ձեռքին տակը ուրիշ եպիսկոպոսներ ալ կ'գտնուին։

Արքեպիսկոպոսաց համար ըսուած է որ ըստ կանոնի ժողովոյն Նիկիոյ՝ երեք արքեպիսկոպոս իշխանութիւն ունին պատրիարք ձեռնադրելու ևլն. բայց ըստ սովորութեան ամենայն եկեղեցեաց՝ այժմ արքեպիսկոպոսութիւնը եղած է սոսկ պատուանուն, զոր կընդունին հասարակ եպիսկոպոսները՝ երբոր բարձրագոյն հոգևոր իշխանութենէ կ'ճանչցուին Առաջնորդ մեծ մի վիճակի կամ երևելի եպիսկոպոսական մի աթոռի։

Սուրբ Էջմիածնի Մ֊այր Աթոռոյն սովորութիւնն է՝ այս արքեպիսկոպոսական տիտղոսը կամ պատուանունը տալ եպիսկոպոսներու՝ նոյնպէս նոցա յանձնուած վիճակին մեծութեանը նայելով, թէպէտ և ամեն անգամ հարկ չհամարուի այս տիտղոսին համար առանձին կոնդակ ևս շնորհել անոնց։ Ասկից կիմացուի որ մի հասարակ եպիսկոպոս չկրնար ինքզինքը արքեպիսկոպոս անուանել, կամ անունին հետ մէկտեղ ստորագրութեան մէջ արքեպիսկոպոս պատուանունը դնել, թէպէտ և արքեպիսկոպոսական աթոռ մը կամ վիճակ մը յանձնուած ըլլայ իրեն։

Ըստ այսմ մի եպիսկոպոսի արքեպիսկոպոս ըսուելու պատիւը կամ իրաւունքը անոր նման է կերպով մը՝ զոր ունի աւագերէցը կամ աւագ քահանայն՝ հասարակ քահանայի վրայ. վասն զի աւագերէցն ալ միայն պատուով և իրաւասութեամբ վեր է քան զքահանայն, և ոչ թէ առաւելութեամբ աստիճանի ձեռնադրութեան։ Ուրեմն ինչպէս որ հասարակ քահանային աւագերէցութիւն տուողը եպիսկոպոսն է, այսպէս ևս եպիսկոպոսին արքեպիսկոպոսական պատուանունը և իրաւունքը— որ վերջին ժամանակներս սովորութիւն եղած է արքե֊պե֊ան անուանել,—տուողը մեր ազգին մէջ անպատճառ պէտք է ամենայն Հայոց Աթոռակալոսը լինի։

Ամենք կհամարին թէ եպիսկոպոսը կընայ բնականապէս արքե֊պե֊ան առնուլ, երբոր իրեն յանձնուած աթոռը կամ վիճակը ըստ ինքեան արքեպիսկոպոսական է. բայց անտարակոյս նախադասելի է այն՝ թէ որ և իցէ եպիսկոպոս առանց կաթողիկոսի հրամանին պիտի չկարենայ ինքզինքը արքեպիսկոպոս անուանել, որքան և մեծ լինի իւր վիճակը։ Ասոր պատճառն ալ այն է՝ որ արքեպիսկոպոսութիւնը՝ ըստ աւանդութեան ամենայն եկեղեցեաց քրիստոնէից՝ զատ և որոշ դաս է աստիճանի՝ եպիսկոպոսութենէն վեր, և ոչ թէ եպիսկոպոսութեան հաւասար։

,,Երբոր դաս աստիճանի եկեղեցւոյ Մ֊եծ֊պաշտօնեայ, կըսէ Լ֊ամբրոնացին, որք ,,թարգմանին մայրապաղաքացիք . . . և ,,գործ է նոցա ձեռնադրել եպիսկոպոս և ,,օրհնել զմեռոնն՝ արկանելով ի նա ,,զպատրիարքական մեռոնն, զոր պահէ ե֊,,կեղեցի յաւելուածով. և երեք մետրա֊,,պօլիտք ունին իշխանութիւն ձեռնա֊,,դրել զարքեպիսկոպոս իւրեանց. սակայն ,,ի նախապատիւ պատրիարքէն (այսինքն ,,ի կաթողիկոսէն) պարտի առնուլ զօրհ֊,,նութիւն՝ սոցա հաճութեամբ և վկա֊,,յութեամբ,,։ Յովհաննէս Աթոռակալոսին

վերոյիշեալ խօսքին մէջ յայտնի նշանակուած էր Մեթրապոլիա ըսուած եպիսկոպոսներուն պաշտօնը։ Վասն զի, ինչպէս որ Յունական բառն ալ կցուցնէ, Մետրապոլիտ*) պէտք է ըսուի համ կըսուէր մայրաքաղաքի եպիսկոպոսը՝ ըստ Յունաց։ Մերոնք հին առենը այս պատուանունը և իրաւասութիւնը սեպհականեր էին միայն Սեբաստիոյ, Մելիտինէի և Կեսրիոյ կամ Մարտիրոսաց քաղաքի եպիսկոպոսներուն։ Ժամանակ մը յետոյ Սիւնեաց արքեպիսկոպոսին տրուեցաւ Մետրապոլիտ անունը հանդերձ այսպիսի իրաւունքով՝ որ ''բարձակից և սեղանակից լինին կաթողիկոսի'' ինչպէս որ կըսէ Ստեփանոս Ոռպէլեանց, և հրաման ունենան իրենց առջևէն միշտ խաչանիշ դաւազան տանել տալու։ Նոյն հեղինակը այս նշանաւոր տեղեկութիւնն ալ կուտայ, ''Սիւ-
''նեաց վանն Մետրապոլտութեան 'ի վե-
''րոյ էր քան զամենայն եպիսկոպոսաքն Հա-
''յոց. զի այլ ոչ ոք ունէր զՄետրապոլ-
''տութեան պատիւն. և որքան պատուի-
''արքն քան զարքեպիսկոպոսն է դեր ի վե-
''րոյ, և արքեպիսկոպոսն քան զՄետրա-
''պոլեան, այսպէս մետրապոլեան քան զե-
''պիսկոպոսն. զի նա ձեռնադրէ զեպիսկո-
''պոսն,,։—Արդ չէ ըսել՝ որ այժմու ժամանակս մեր ազգին եկեղեցական դասակարգութեանը մէջ Մետրապոլիտ անունը և Մետրապոլտական իշխանութիւնը չըկայ։ Վերջին Մետրապոլիտ եղած է՝ իրրև յաջորդ Սիւնեաց աշխարհի Մետրապոլիտներուն՝ բարեյիշատակ և մեծանուն պաղտասար Մետրապոլիտը Արտան—ցալալեանց։

Եկեղեցական դասակարգութեան չորրորդ աստիճանն է Եպիսկոպոս–ը, որոյ վրայ այսքանը միայն յիշատակեմք՝ իրրև վերոյիշեալ տեղեկութեանց ամբողջութիւն մը տալու համար՝ որ Եպիսկոպոսական իշխանութիւնը կամ աստիճանը յառաքելոց սահմանուած է, ինչպէս որ առաջ ալ ըսինք, և պաշտօնն է ձեռնադրութիւն ընել, եկեղեցի, սեղան, պատկեր օծել և այլն։ Մեր ազգին երկրորդ կամ հանրական լուսաւորութեան ժամանակը՝ մինչև 400 էն առելի եպիսկոպոս եղած կը յիշատակուի Արտաշատի մէջ, վասն զի, ինչպէս որ կ'յիշատակեն Ագաթանգեղոս և Ղազենոր պատմադիրները, սուրբ Լուսաւորիչն մեր հարկ համարեր է որ Արտաշատի ամեն մէկ գաւառներն ալ իրենց մէկ մէկ եպիսկոպոս ունենան։ Պետրոս Գետադարձ Կաթողիկոսին օրերը Արտաշատի մէջ 500 եպիսկոպոսաց թիւ կամ վիճակ կհամարուի եղեր, ուստի և 500 եպիսկոպոս, ինչպէս որ կըսէ Մատթէոս Ուռհայեցին. ''Յորժամ էր Տէր
''Պետրոս յաթոռ Արտաշատուեանն և
''Արտաշատ աշխարհին . . . եպիսկոպոսք
''500 փառաւորք, և գաւառատեսուչս
''ի վերայ 500 թեմի հանապազ,,։

Մեթրապոլիտ պատուանունին պէս խափանեալ է այժմ մեր ազգին մէջ նաև Պոլեպիսկոպոս անուան գործածութիւնը, ինչպէս նոյնը խափանուած է նաև Յունաց և Լատինացւոց մէջ։ Պոլեպիսկոպոս բառն ալ Յունարէն լինելով, կնշանակէ գիւղի՝ այսինքն քանի մը գեղերու եպիսկոպոս. իսկ եպիսկոպոսը քաղաքի կամ

(*) Ցն. Մետրոփոլիս. Մետրապոլիտ. Ղեքսիկոն, մայրաքաղաք։

քանի մը քաղաքաց վերաբեռուչ է։ Պոլսեպիսկոպոսները ներքին իշխանութեամբ եպիսկոպոսն վար չէին, ինչպէս որ արքեպիսկոպոսք և Մետրապոլիտք ալ վեր չէին եպիսկոպոսեն. հապա միայն արտաքին պատուով և իշխանութեամբ տորդաղբերեալ էին եպիսկոպոսաց։ Այս բաներուն անհարկութիւն մի է նաև այն խօսքը՝ որ կկարդամք Եղիշէի պատմութեանը մէջ թէ ,,Յայնմ ժամանակի սխմեցան եպիս-,,կոպոսքն յիւրաքանչիւր իշխանութիւնս, ,,և առաքեցին զքորեպիսկոպոսս ի գեօղս ,,և յաղարակս և ի բազում ամուրս լեռ-,,նային գաւառացն,,։

Չենք կրնար վերջացնել այս յօդուածը՝ առանց աւելցընելու այնպիսի դիտողութեան արժանի տեղեկութիւն մը՝ որ Հայաստանեայց եկեղեցւոյ էական մէկ իրաւանցը կվերաբերի, և որուն համաձայնութեամբ ուշադրութիւն չընելով Հռովմէական Հայերը, կարծեն թէ վիպութիւն կամ ապացոյց մը ունին պապական աթոռոյն նախագահութեանը, կամ որ նոյն է՝ Հռովմայ պապին Հայաստանեայց Սայր Աթոռոյն և ուրիշ պատրիարքական աթոռոց վրայ ունեցած կարծեցեալ իրաւասութեանը։ Ի՞նչ է նոյն, ինչպէս որ տեսանք,— ի հարկէ ի Յունաց առնուած և իւր ժամանակները մեր եկեղեցւոյն մէջ ևս ընդունելի և սովորական եղած կարգադրութեան նայելով,—շատ կանոնաւոր կերպով կշռել վերկն վար, և համառօտիւ կբացատրէ եկեղեցական դասակարգութեան ինը աստիճանները՝ այսպէս.

Ա. Աստ. Պատրիարք.
Բ. ,, Արքեպիսկոպոս.
Գ. Աստ. Մետրապոլիտք.
Դ. ,, Եպիսկոպոս.
Ե. ,, Քահանայք.
Զ. ,, Սարկաւագունք.
Է. ,, Ակս—Սարկաւագունք.
Ը. ,, Ընթերցողք (կամ Կըսպիրք։
Թ. ,, Երգեցողք կամ Սաղմոսասացք։

Երդ՝ Մխիթարայ Գօշի Դատաստանագրոց վերջերը նոյն Լամբրոնացւոյ խօսքերը ոչ սակաւ այլափոխուած ու համառօտուած կտեսնեմք յանհմուտ գրչէ, և որ մեծն է՝ այնպիսի կամաւոր կամ ոգիական խարդախանօք մը՝ որ ամենայն կարդացողի աչքին պէտք է զարնէ, և Դատաստանագրոյ գոնէ այն կտորին ձեռք խառնուած լինելը յայտնապէս կցուցնէ։ Ա՛ման դե թէպետ առաջին վեց դասք եկեղեցւոյ կհամարէ այսպէս, Պատրիարք, Արքեպիսկոպոսք, Մետրապոլիտք, Եպիսկոպոսունք, Քահանայք, Սարկաւագունք, բայց զարմանալի կերպով եօթներորդ դաս կընէ դարձեալ, Եպիսկոպոսները, ուրիշ Պաշտպանները. ,,որք ունին, կըսէ, ,,զպատուականագոյն աթոռ՝ նմանեալ սե-,,րովբէից . . . գործ է նոցա ձեռնադրել ,,զեպիսկոպոսունս և ինքնակամ օրհնել ,,զնուն օծութեան,,։ Բայց ծիծաղելին, մանաւանդ թէ պժգալին ամենայն իրաւագիտաց և ողջամիտ աստուածաբանից՝ անոր ինկերորդ դաս ըսածն է, որ անշուշտ ժամանակին Ընկերածացը մէկուն աւելցուցածն է՝ ի շնորհուկս պապին և պապականաց. ,,Ննջեցեալ պապ՝ վերապրոյն ,,քան զամենեսեան՝ պապիս նմանեալ ,,քերովբէից . . . և գործ է նորա

,,կարդել ղդաստ Թադաւորաց,,: Եթէ չգիտնայինք այսպիսի խօսքերու իսկական նշանակութիւնը, մէջ ապաքէն իրաւունք կունենայինք ըսելու՝ թէ այս շողոքորթութիւնը ծաղրածուութեան համար եղած է: Վ՚ան ղի նախ՝ ամենուն յայտնի է որ Հռովմայ պապին իշխանութիւնն ալ արդէն յիշատակուած է Պատաստանագրոց այս հատուածին առաջին կտորին մէջ, յորում Պատրիարքաց վրայ խօսելով ըստ Լամբրոնացւոյն՝ ըսած է, ,,Որք ունին ,,զաթոռ Յորից աւետարանչացն,,: Երկրորդ, որ տուեր էր պապերուն՝ նաև այն ժամանակները՝ իշխանութիւն կամ պաշտօն կարգելոյ պատուս Քաջաւորաց: Ապաքէն և ոչ ոք: Իսկ եթէ Պատաստանագիրքը խարդախող Ունիթոռին միտքը այն էր որ Հռովմայ պապը ձանչցուի նաև՚ի Հայոց՝ Քաջաւորաց և կայսր կայսերաց, ի դէպն փոխանորդ Աստուծոյ է վերայ երկրի, և գլխին Աստուած անախալ, ինչպէս որ սահմանեց այս տարի Վատիկանեան ժողովը, այդ մեզ ամենևին ընդունելի չէ, և ուրիշ յօդուածով պատրաստ ենք այդ սոսկալի մոլորութիւնը հերքելու:

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԵԱՑ ԳԻՒՂՕՐԵԻՑ ՎԻՃԱԿԻՆ ՀԱՅՈՑ ՇԱՄԱԽԻՈՑ:

ՑԱՐԳՈՒՑ ԸՆԹԵՐՑՈՂ.

Որովհետև Շամախւոյ վիճակն իրան փոքրըկութեան համար և Հայաստան աշխարհից հեռի լինելու պատճառաւ՝ աննշան դրութեան մէջ է մնացած ցայսօր մեր հայրենակիցներից, որովհետև սորա վիճակի դրութիւնն և գիւղօրէից անունները անծանօթ են սիրելի Աղթամցոց մերոց, ուստի իմ այս տարի օգոստոսի 3-ին այցելութեան ժամանակին արժան համարեցայ գրչի տակ առնուլ այն գիւղօրէից անուանքն և գրեր նոցա ըստ կարեացս փորը՛ի շատէ ծանօթացնելոյ համար սիրելի աղթայնոց իմոց Շամախւոյ վիճակի Հայերին, որ այժմ յանձնուած է իմ հոգևոր հովուութեան:

Շատ ուրախական կը լինէր որ ամեն վիճակների այցելութեան լրագրի պատմութիւն լոյս տեսներ այժմ Հայոց աղգին իմանալու համար իւրան մեծութեան և որքանութեան չափը:

Ամենաչնչին ապրեալ Շահախո Հայոց

ԱՐՔԻՊԻՍԿՈՊՈՍ ԴԱՆԻԵԼ:

Երկու տարի և վեց ամիս Շամախի մնալով, և տեղւոյն ժողովրդեան փոքր ինչ ուղղութիւն տալով, 1865 ամի օգոստոսի 3-ին յայցելութիւն երի գիւղական եկեղեցեաց և ժողովրդեանն՝ առնելով ինձ հետ հոգևոր տեսչի Ստեփանոսպիր Սահակ Լազարեանցը: Երեքշաբաթի օր ժամ 4-ին գնի ճաշին՝ բացակայեցայ ես Շամախի քաղաքից, և իմ ընթացքս ուղղեցի դէպ՛ի Քալախանի անուանեալ գիւղն: Այս գիւղն ընկնում է հարաւակողմ Շամախւոյ՝ 5 վերստ հեռաւորութիւնով: Այս գիւղն տաճկաց լեզուով անուանում է Շխլու. որովհետև շատ գերեզմանները կան Տաճկաց, որը դմբեթազարդ պարսպապատ, և որը քարից փորած և Տաճկական տառերով զարդարված: Տեղւոյս բնակիչք պատմեցին, թէ՝ ոմ որ այս գերեզմանների քարերից բերէ և տուն շինէ՝ կը կատաղի, և այլ այսպիսի՛ անտեղի հրաշքներ պատմեցին. բայց ես նախապաշարմունք համարեցի և տգիտութեան պատուղ: Այս գերեզմանատան մեծ տարածութիւնից երևում է, որ պէտք է եղած լինի փոքրիկ քաղաք:

Այս գիւղն իրան տարածութեամբ ընկած է հիւսիսակողմն մի դեղեցիկ հովիտ.

ունի շատ աղբիւրներ և սառն ջրեր: Այս աղբիւրների ջրերով ոռոգանում են զանազան պարտէզներ և այգիներ: Հողն շատ արգաւանդ է և այդիք առանց ջրելոյ շատ ղարմանալի զինի կը տան: Տեղւոյն բնակիչք այժմ են բոլորն Հայաղի 40 դերդաստանն. ունին մի եկեղեցի փայտաճարկ Պարոն Յարտիրոս Նիազեանցի արդիւնքով շինած 1835 թուականին: Այս եկեղեցւոյ ծախքն խախտուած էր, և շատ կաթսաներ էր անհոդուածիւնից. ուստի կարդադրեցի, որ շինեն եկեղեցւոյ գումարով: Այս գիւղն ունի մի Քահանայ Սարգիս անուն Նիազեանց:

Այս գիւղումն իջևանեցայ ես տեղւոյն երեցփոխանի*) տանը. սա շատ հիւրասիրեց զիս. և մի օր մնալուց յետոյ՝ ամսոյս 4-ին ժամ 6-ին ուղեւորեցաք ի Քապուճ գիւղն: Ժամ 7-ին հասանք ի Քարքանջ գիւղն. բնակիչք տեղւոյն ընկալան զիս շատ սիրով ու քաղցրութիւնով. նոքա եկեղեցական դասքով մի վերստ հեռաւորութիւնեմբ գիւղից ընդառաջեցին ինձ, և տարին եկեղեցին, ուր հաւաքված էին ժողովրդոց բազմութիւն. յետ պատշաճաւոր օրհնութիւն մատուցանելոյ իմ նոցա գիմեցի ի պատրաստեալ ինձ բնակարանն ի տուն պարոն Յարութիւն Խալքաշեան:

Նոքա առաջին անձինք են Քարքանջու, և շատ հիւրասէր բնաւորութիւն ունին, և քաղաքական կեանք են վարում: Ամսոյս 5-ին եղև յայցելութիւն եկեղեցւոյ տեղւոյն, որ Շամախեցի Պարգարայ Յազովի արդեամբ է շինուած գմբեթաւոր չորից սեանց վերայ: Այս եկեղեցին չունելով իրան շրջապատում պարիսպ, շատ անշուք էր երևում: Ուստի կանչեցի ինձ մօտ ժողովուրդն՝ և յորդորեցի, որ յանձն առնեն և եկեղեցւոյ շրջապատումն պարիսպ շինեն, և մի փոքրիկ ծխական ուսումնարան շինեն: Փառք Աստուծոյ, այս օրհնեալ ժողովուրդն իմ խրատին անսալով՝ իւրաքանչիւր մարդ սկսաւ ցոյց տալ իրան հաւանութիւնը, մանաւանդ ուսումնարանի համար. այս տեղս բացվեց ստորագրութիւն, շատերն դրուեցան դրամ, շատերն խոստացան քար բերել, և շատերն էլ խոստացան միշակութիւն անել շինելոյ ժամանակ: Միայն իմ ցաւս ուսումնարանն էր, որ կարողանամ այս տեղս հաստատել իրան ամենատեսակ յարմարութեան և օդոյ ու ջրոյ պատուականութեան համար: Այս Քարքանջ գիւղն ունի իրան դիրք մի բարձրաւանդակ լեռան վերայ՝ 7 վերստ հեռաւորութիւնով Քալախանի գիւղից՝ նորա արևմտեան կողմն: Ունի շատ այգիներ, որոնք առանց ջրելոյ տալիս են ղարմանալի զինի: Երկիրն շատ պտղաբեր է՝ ունի մի ամենապատուական աղբիւր՝ կէս վերստ հեռու գիւղից՝ Ս. Անտառուր անուն, որով կառավարվում է գիւղն: Ծէ և ունի այլ ևս շատ ջրեր, բայց բնակիչք փոքր ինչ անհոգ լինելով՝ չեն կամենում, որ հորերը փորեն և աղբիւրները շատացնեն: Այս գիւղի բնակիչք են 122 տուն: Նոքա շատ առողջ և արի մարդիկ են. նոքա ամեն շրջակայ քաղաքներ և գիւղեր առուտուր են անում և ապրում են: Ունին մի եկեղեցի՝ Ս. Աստուածածին անունով շինուած, և մի Քահանայ Յարութիւն անուն: Այս

(*) Բնագրին մէջ երեցփոխանէ առջև միջոց թողնված էր. ուր կ'երևի՝ թէ նորին անունը պէտք էր գրել, բայց մոռացած էր կատարել: Ե. Խ.

դիւղից փոքր նեղքև կայ մի ուխտատեղի Ս. Սահակ Պ. արդապետ անունով, ուր տեղ յաճախում են շրջակայ գիւղօրհից ուխտաւորները, և երբեմն շ. ամախեցիք. բայց այժմ սակաւացեր է ուխտաւորաց գնալն՝ Խողոքականութեան աղանդն տարածուելոյ համար շ. ամախում:

Այս գիւղում երկու օր մնացի Իւղբաշի Յարութիւնի տան. և հարկաւոր եկեղեցական հաշիւները վերջացնելուց յետոյ՝ ամսոյս 9-ին ժամ 9 առաւօտեան՝ մեզ սիրելի ժողովրդեանն այր և ձի բազմութիւնով դիմեցաք ի Դոքա-ֆաբքանջ գիւղն, որ լինի 7 վերստ հեռի ի Վարքանջէ. այս գիւղն բաղկանայ 20 դերդաստանից՝ գաղթած Խանութեան ժամանակումն Պ. արաբաղու գիւղերից: Այս գիւղն մի ձորամէջ է շինուած. որոյ բերանն նայում է դէպ ի Երալու դաշտն կուր գետոյ շրջակայքում: Մնակիչք տեղւոյն նոր ի նորոյ սկսեալ են տնկել այգիներ, և ասում են՝ թէ՝ շատ լաւ գինի է լինում: Այս գիւղումն 4 ժամ անցուցի ի տան տեղւոյն Իշխան Պարոն Գէորգայ. և յետ մխիթարելոյ տեղւոյն ժողովրդեան՝ դիմեցի ի Պ. անիշէն, որ շինված է հարաւակողման ձորակի ծայրումն գեղեցիկ դիրքով: Այս գիւղն 5 ժամէն պկինի ճաշուն շաբաթ երեկոյեան հասանք, և իջևանեցաք տեղւոյն Իշխանի տան՝ որ մի ծերագոյն անձ էր և շատ հաւատարիմ, Գրիգոր անուն Դամուրչեանց. սա ունէր վեց արու զաւակ, երեքն ամուսնացած և երեքն ապագ*). ունէր կին շատ ջերմեռանդ և հաւատարիմ տանտիկին. յիշատակած Գրիգոր Դամուրչեանց իրան սեպհական ծախքով եկեղեցի էր շինում այն գիւղացւոց համար. ուստի և ես յերեկոյեան շաբաթի ժողովեցի բոլոր ժողովուրդը եկեղեցւոյ տեղումն, որ լինի 18 դերդաստան. և նոյն բացօդեայ տեղումն կատարեցի երեկոյեան ժամերգութիւնը լինձ հետ եղած քահանայիւ և դպրաց բազմութիւնով: Առաւօտեան կիւրակէի փառաւոր եկեղեցական հանդիսիս կատարեցի պ. լիմնարկէք եկեղեցւոյն. օծի սուրբ Միւռոնաւ պհարկաւոր վէմս յանուն Առաքելոց, և զետեղեցի ի սահմանեալ տեղիս հիման ըստ ծիսի մերս. Հայաստանեայց ամենամաքուր Առաքելական սուրբ Եկեղեցւոյ: Յետ այսորիկ կարգացի պհամառօտ քարոզ ի յորդոր շինութեան տաճարին. և այնպէս արձակեցի զժողովուրդն: Նոր էր արդարև այս հանդէս ի Պ. անիշէն, և շատ մխիթարվեցան Հայազգիք Պ. անիշէնի և շրջակայ գիւղօրհից՝ իրանց քրիստոնէական սուրբ հաւատոյ և եկեղեցւոյ պայծառութեան համար: Եկեղեցի շինող Գրիգորն Դամուրչեանց հայկերոյթ արար մեզ և բոլոր գիւղացւոց Պ. անիշէնի և շրջակայ գիւղականաց, որոնք ներկայ էին գոնված եկեղեցւոյ Հիմնարկութեան օծութեանն, և այնպէս արձակեց բազմութիւնն: Ա՛յսչէց յետոյ մեք ևս սկսաք հանդիստ առնուլ. և պկինի ճաշէն՝ ժամ 2-ին օրհնելով իմ փոքրիկ հօտ ժողովրդեան Պ. անիշէնի՝ գիմեցաք ի Սաղհան, որ լինի հեռի յիշեալ գիւղէն 10 վերստ: 37 ժամէն հասանք Սաղհան և գնացինք իջևանեցինք սուրբ Յակոբեանոս Նախավկայի վանքումն:

(Շարունակելի:)

(*) Ա՛ղաք է բառ Արաբերէն, և թարգմանի ամառ է կոյս, անամուսին, և պատապանէ, գինգ Լեզ: Ա. Ե.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄՈՍ ԿՈՄԵՕՆԻՈՒՍ ԵԻ ՆՈՐԱ

·ՏԻՏԱԳՈՒԳԱ ՄԱԿՆԱ·

(Շարունակութիւն)

Ժ-րդ Գլ.ԽՒՆ·

Ընդհանուր և ամենատէր ուսման կանոններէ։

Ինչպէս ոստայնանկը ոտի մի շարժուածքով հազարաւոր թելեր է հիւսում, ինչպէս ջաղացպանը շատ կարճ ժամանակում ցորենը աղում է, մեքենապետը մեքենաներով զժուարագոյն գործեր է կատարում, այնպէս և կան միջոցներ ուսման դժուարութիւնները նուազեցնելու, ուսման ժամանակը կարճացնելու։

Բայց այդ միջոցները շուտ չենք գտնի, մինչև որ չծանօթանանք վէրքերի և նոցա պատճառների հետ. վէրքերի հետ, ասում եմ, որով ուսումնարանները իրաւի տանջուում են։ Պէտք է գիտենալ, թէ ինչու աշակերտները այնքան դանդաղութեամբ յաջողութիւն են գտնում գիտութիւնների և ճարտարութիւնների մէջ. իսկ մի քանի գիտութիւններ մինչև անգամ ընաւ չեն ուսանում։

Իսկական պատճառները սոքա են. 1) ուսումնարանները չեն որոշում թէ մինչև ո՞ր նպատակը աշակերտներին պէտք է հասցնել մի տարի, մի ամիս, կամ մի օր ժամանակում. 2) վարժապետները չգիտեն եղանակը կամ ճանապարհները, որոնք ուղղակի նպատակին են ըերում. 3) ինչ որ ի բնէ շաղկապուած է, նոքա չեն միաւորում, այլ անջատում են։ Զորօրինակ՝ ուսուցանում են միայն կարդալ, յետոյ միայն գրել, և այսպէս ամենայն բան՝ առանց որ և իցէ կապի։ Կարդալ և գրելը, բառը և իրը, ուսում և ուսուցանելը պէտք է միատեղ կատարուին այնպէս, ինչպէս որ վաղուց ժամանակ պէտք է բարձրացնել և իջեցնել ոտերը, խօսակցութեան ժամանակ լսել և պատասխանել. գնդակ խաղալու ժամանակ ձգել և բռնել. 4) ճարտարութիւնները և գիտութիւնները լիուլիցամբ, բովանդակութեամբ չեն հաղորդում, այլ հատ ու կտոր կարկատաններով. 5) ուսումնարաններում ամենայն գիտութիւնների համար գանազան և ուրիշ ուրիշ դասատուութեան ոճ են գործ ածում. 6) չեն իմանում աշակերտներին մի և նոյն ժամանակ և գրաւել և ուսուցանել. 7) ուսանողին չափազանց շատ ուսուցիչներ են տալիս, որոնցից իւրաքանչիւրը այլակերպ է վարվում աշակերտի հետ. վերջապէս 8) ուսանողներին թոյլ է տուած ուսումնարանում և ուսումնարանից դուրս կարդալ ոչ միայն դասագրքեր, այլ և ուրիշ գրքեր՝ կարծելով, որ սոքա դորանից առաւել կ՚յառաջանան, այն ինչ՝ երբեմն ցրուում են այդ կերպ իւրեանց միտքը*)։

Ա՛յս բոլոր արդիքները պէտք է ոչնչանան. և պէտք է ընդունել միայն այն, ինչ որ ուղիղ ճանապարհով, առանց շեղուելու, նպատակին է հասցնում։ Ինչ բանի որ միջոցներով կարելի է հասնել, նորա համար պէտք չէ մեծ միջոցներ գործ դնել,

Մենք պէտք է մեզ օրինակ առնենք արեգակը. նա բովանդակ տիեզերքը լուսաւորում է, բոլորին կեանք, ջերմութիւն, զօրութիւն է տալիս։

Մենք պէտք է գիտենք արեգակի ոճը, նորա գործողութեանց կերպը, և պէտք է փոխադրենք

(*)Մենք չենք կարող ընդունել, իբրեւ թէ ընթերցասիրութիւնը աշակերտներին վնաս կարող է պատճառել։ Մենք միայն կոմեօնիուսի հետ կասենք, որ երբեմն գրքերը իրաւի կարող են ցրուել աշակերտների միտքը, եթէ գրքերի ընտրութիւնը անկանոն է։ Ուստի չմերժելով ընթերցասիրութեան անհերքելի օգուտը, պէտք է ասենք, որ ուսումնարանների պարտականութիւնն է հսկողութիւն ունենալ աշակերտների վերայ, որպէս զի նոցա ընթերցասիրութիւնը զրդռւի եւ պահպանուի այնպիսի գրքերով, որոնք իրաւպէս օգտաւէտ են։ Վատ գիրքը երբէք պէտք չէ երեխայի ձեռքից խլել, այլ պէտք է հասցնել նորան այն գիտակցութեան, որ այն գիրքը անպէտ եւ վնասակար է։ Յայտնի է որ արգելած պտուղը քաղցր է, մանաւանդ մանկական հասակին։

Կոմենիոս.

ուսումնարանների գործողութեանց եղանակներին. 1) արեգակը չի պարապում միայն մի առարկայով՝ ոչ ծառով՝ ոչ կենդանիով, բայց լուսաւորում ու ջերմացնում է և ցնդեցնում է ամբողջ երկիրը. 2) նա բոլորը լուսաւորում է մի և նոյն ճառագայթներով, ամպերի մի և նոյն թանձրանալով և անօրանալով բոլորը ոռոգանում է, մի և նոյն հողմով բոլորը փչում և մաքրում է, մի և նոյն ցուրտ ու ջերմով բոլորը կատարում է ևլն. 3) մի և նոյն ժամանակ ամենայն տեղ ուր որ տալիս է գարունք, ամառ, աշունք և ձմեռ, բոլորը կանանչեցնում է, ծաղկեցնում է, պտղատու դարձնում է, ի հարկէ իւրաքանչիւրին ըստ իւր բնութեան. 4) նա անդադար պահպանում է մի և նոյն կարգը, և այսօր, և էդուց, և միշտ. 5) նա իւրաքանչիւր բոյսը նորա սեպհական սերմից է ծնուցանում, և ոչ ուրիշի սերմից. 6) նա գոյացնում է բոլորը, ինչ որ մի և նոյն ժամանակ միատեղ պէտք է լինին, կեղև և միջուկ, ծաղիկներ և տերևներ, պտուղներ և սերմեր. 7) նա բոլորը գոյացնում է որոշեալ յաջորդութեամբ, այնպէս որ մէկը միւսին ճանապարհ է պատրաստում, մէկը միւսին հետևում է. 8) նա ոչինչ անօգուտ բան չի գոյացնում կամ թէ պրում և կեանք չի տալիս նորան, ինչ որ անօգուտ է։

Այս այն ժամանակ արեգակին հետևող ենք, 1) երբ իւրաքանչիւր ուսումնարանը կամ դասատունը միայն մի վարժապետ ունի.*) 2) երբ մի առարկայի համար մի հեղինակ է ընտրուած. 3) երբ մի և նոյն գործը ամբողջ դասատանից է կատարուում. 4) երբ բոլոր գիտութիւնները և ճարտարութիւնները ուսուցանում են մի և նոյն եղանակով. 5) երբ ամենայն բան ուսուցանուում է հիմնաւոր կերպով, կարճ և լաւ. 6) երբ բոլոր շաղկապուածը կապուած մնում է. 7) երբ ամենայն ինչ իւր յաջորդութիւնն ունի, այնպէս որ այս օրուանով կարող է ամրանալ երէկուանը և ճանապարհ պատրաստել էգուցուանի համար. 8) երբ բոլոր անօգտակարը ամենայն տեղից ոչընչացրած կլինի

Այս կանոնները գործ դնելուց՝ ուսումը կընթանայ և արագ և հեշտ։

ԱՌԱՋԻՆ ԽՆԴԻՐ։

Ի՞նչպէս մի վարժապետը կարող է յաջողութեամբ կատարել իր գործը քաղաքիկ աշակերտների առաջ։

Մի վարժապետը ոչ միայն կարող է մինչ 100 աշակերտ ուսուցանել, այլ և պարտական է, վասն զի այդ օգտաւէտ կլինի որպէս վարժապետի համար, նոյնպէս աշակերտների համար։ Երբ աշակերտները բազմաթիւ են, վարժապետը առաւել եռանդով է ուսուցանում. բայց քանի նա եռանդով է ուսուցանում, այնքան շատ կենդանութիւն են ստանում նորա աշակերտները։ Աշակերտները ևս փափագով ուսանում է՝ երբ բազմաթիւ հասարակութեան մէջն է ընկերների հետ միատեղ սովորելը նորան վստահութիւն է տալիս և խրախուսում.

Բայց ի՞նչպէս։ Քննենք բնութեան արարածները։ Ծառի բունը մինչև վերջին տերևը չի հասնում, նա դադարում է մէջ տեղը, և իւր հիւմքը հաղորդում է նախ և առաջ գլխաւոր ոստերին, իսկ սոքա տարածում են հետաւոր տեղերը ևլն։ Աբեգակը իւր ճառագայթները տիրում է տիեզերքի վերայ, և ամենայն էակը նորանից այնքան լոյս և ջերմութիւն է ստանում, որքան իւր կենդանութեան համար հարկաւոր է։ Բայց ճառագայթները, որոնք հողմի մէջ են արձակում, առաւել զօրեղ ներգործում են, նորա շրջագայքներում առաւել շատ ջերմութիւն են տարածում։

Այս բանին հետևելով՝ մի վարժապետը շատ հեշտութեամբ կարող է բաւականացնել բազմաթիւ աշակերտներին. 1) եթէ բոլոր բազմութիւնը որոշեալ բաժինների կամ տասնորդների (դեկուրիայ) բաժանուի, ամենայն բաժնի մէջ մի աւագ նշանակուի, և աւագների վերայ հսկողութիւն յանձնուի նոյնպէս ուրիշներին ևլն. 2) եթէ նա որպէս դասատան մէջ, նոյնպէս դասատնից դուրս՝ կուսուցանէ ոչ թէ մի առանձին աշակերտին, այլ բոլորին միասին և միատեղ։ Նա պէտք է նստած լինի ամբիոնի վերայ, ամենեցուն հսկելով, ամենեցուն ուսուցանելով, նա պէտք է Աբեգակ լինի։

(*) Այդ նախակրթական դպրոցների համար միայն կարելի է ասել։ Թրգ.

Որպէս զի վարժապետը բոլոր աշակերտների մէջ ուշադրութիւն դրդռէ, բոլորին լոյս և օդուտ անպակաս առնէ. նա պէտք է խօսէ միայն այն ժամանակ, երբ աշակերտները լսում են, նա պէտք է ոչինչ չտեսցանէ, երբ նորա ունկնդիր չեն։ Միայն լսողը կարող է սովորել։

Իսկ ուշադրութիւնը կ'դրդռուի ոչ միայն բաժիններէ աւազաց և միւս հսկողաց միջնորդութեամբ, այլ պիտաւորապէս կ'դրդռուի վարժապետից, և այս հետևեալ 8 պայմանները կատարելիս՝

1) Երբ վարժապետը միշտ աշխատում է հաղորդել որ և իցէ նոր հետաքրքիր և օգտաւէտ բան։

2) Երբ ուսանողները, հարցմունքների միջնորդութեամբ, շարժառիթ ունին խորհրդածելու։

3) Երբ վարժապետը՝ բարձր տեղին նստած կամ կանգնած, դասատութեամբ դիտում է ամենայն կողմ, և այդպէս թոյլ չէ տալիս՝ որ և իցէ աշակերտը՝ բացի վարժապետից, ուրիշ կողմ նայէ։

4) Երբ բոլոր հաղորդուածը կարողութեան չափ շօշափելի է։

5) Երբ վարժապետը ժամանակ ժամանակ դադարում է և առանձին առանձին աշակերտներին դիմում է, ասելով՝ "այս անուն, կրկնիր, ինչ որ ասացի", կամ" ասա', այս այսպէս է"։

6) Երբ հարցուած աշակերտը դժուարանում է պատասխան տալ, վարժապետը պէտք է արագութեամբ միւսին դիմէ։*)

7) Երբ մի քանի մարդ չէն կարողանում պատասխանել, վարժապետը պէտք է բոլոր դասատանը դիմէ և կանչէ պատասխան տալու միւսդղին։ Այդպիսի ժամանակ ամենայն սխալը իսկոյն պէտք է ուղղուի։

8) Երբ ուսումը վերջացաւ, պէտք է աշակերտներին թոյլատրել, որ վարժապետներին դիմեն իւրեանց սրտի ըղձալի հարցմունքներով։

Այսպէս պէտք է վարժել աշակերտներին, և նորա շատ շուտ կսովորին ամենայն գործ այնպէս սկսել, որ միշտ ղգաստութիւնը և պատրաստութիւնը նորա մէջ անպակաս լինի, որ կարօտութիւն չունենան խրախուսանքի և քաջալերութեան։ Եւ այդ սովորութիւնը մինչ ի մահ նորա մէջ կմնայ։

Կարող են դիմաղրել մեզ, թէ այդ բոլոր բանի համար մի առանձին հսկողութիւն է հարկաւոր. վասն զի պէտք է դիտենալ, թէ արդեօք մատչո՞ւր են պահած տետրակները, գրքերը, չուրի՞չ են գրած դասերը, և այլն։ Այդքան բանի համար, կասեն՝ ժամանակ է հարկաւոր։ Պատասխանում եմ, բնաւ հարկաւոր չէ միշտ ամենայն բան խնդնալ, տետրակները քննել։ Այդ բանը բաժիններուի աւագներին է յանձնուում։ Իսկ վարժապետը այսօր մէկի տետրակն է քննում, եղուց միւսին, և այդպէսով աւագների գործը ստուգում է։ Կրկնութիւնների ժամանակ նա պէտք է արագութեամբ մէկ աշակերտից միւսին դիմել։ Այս եղանակով բոլորիքեանք կարգ ու կանոնի են ընտելանում և կատարում են իւրեանց պարտականութիւնները։ Նոյնը կարելի է գործ դնել թելադրութիւնների ժամանակ, պատուիրել երբեմն մէկին, երբեմն միւսին կարդալ գրածը։

Առհասարակ լեզուի վարժութիւնների ժամանակ կարող են դժուարութիւններ հանդիպել. բայց և այս տեղ հնարաւոր է այդպիսի միջոցը։ Երբ ղբօրինակ աշակերտները մի լեզուից միսի թարգմանում են և բոլոր բաժինները վերջացրեցին իւրեանց աշխատութիւնները, այն ժամանակ կարելի է երկու աշակերտին դուրս կանչել. որոնցից մէկը պէտք է իւր թարգմանութեան վերայ, իսկ միւսը պէտք սխալները նկատէ։ Յետոյ ամբողջ դասատանը իւր նկատողութիւններն է անում, և վերջապէս և ինքը վարժապետը։ Այնուհետև գործերը փոխանակում են։ Աշխատասիրութիւնների ուղղելու այս եղանակը շատ օգտաւէտ է աշակերտների զարգացման համար։

Այս ժամանակ աւագները պարտաւորուած են հսկել, որ իւրաքանչիւր աշակերտը կատարէ իւր գործը, որ իւրաքանչիւրը ուշադիր լինի սխալների ուղղելու ժամանակ, և ուրիշն սխալները լսելով՝ ուղղէ իւրեանը։

(*) Այս պարտաւորում է աշակերտներին անսպատճառ ուշադիր լինել։

Այսպէս վարժապետի աշխատութիւնը հեշտանում է, ոչ մի աշակերտը անգործ չէ, բոլորի ուշադրութիւնը գրգռուում է, մէկին նկատածը օգտաւէտ է և միւսին, և տասին աշակերտների շարադրութեանց մէջ բերած խօսքի զանազան դարձուածքները վարժում են դատողութիւն իրերի վերայ, և լեզուի գործածութիւնը վարժվում է։ — Թարգմանութիւնների վերայ այս նկատողութիւնը կարելի է վերաբերել և բոլոր միւս վարժութիւններին։

Այսպէս ուրեմն մի վարժապետը յաջողակի կարող է բազմաթիւ աշակերտներին ուսուցանել։

ԵՐԿՐՈՐԴ ԽՆԴԻՐ.

Ի՞նչպէս պէտք է ուսուցանել գիտութիւն։

Ցայտնի է, որ առարկաների բազմութիւնը աշակերտների միտքը ցրուում է։ Ուստի դասադիրքը պէտք է լաւ և նպատակին յարմար լինին յօրինուած։ Ամենայն դաստատուն պէտք է իւր դասադիրքը ունենայ։ Մի դաստատն բոլոր աշակերտները պէտք է ունենան միակերպ դասագիրքեր, միօրինակ տախտակներ, միօրինակ բառարաններ, և այլն։

Վարժապետը պէտք է բացատրէ և վարժեցնէ, ինչ որ կայ դասագրքի մէջ՝ պէտք է գլխովին քաղաքի, գործնականապէս մշակուի։

Այդպիսի դասագրքերի մէջ պէտք է պարունակած լինի ամենակաճօրէն և միևնոյն ժամանակ ամենալիօրէն տիեզերագիտութիւն կամ իրագիտութիւն, ուր բացատրութիւնը այնպիսի ձև պէտք է ունենայ, որ հասկանալի լինի ամենեցուն։

Բացատրութեան ամենայարմար ձև հաւ պատմական է. վասն զի չկայ այնպէս բնական բարբառ, ինչպէս խօսակցութիւն։

ԵՐՐՈՐԴ ԽՆԴԻՐ.

Ի՞նչպէս դիմել այն նպատակին, որ որոշեալ ժամանակի մէջ բոլոր աշակերտները ծանօթանան միևնոյն գործով պարապել։

Անտարակոյս շատ օգտաւէտ է, եթէ մի դաստան բոլոր աշակերտները այնքան հաւասար են, որ կարող են մի և նոյն ժամանակ միևնոյն գործով պարապել։

Այս նպատակին կարելի է հասնել, 1) ուսումնարանում աշակերտներ ընդունելու ժամանակը տարին մի անգամ նշանակելով, և ամենից աւ է գարունքին, և 2) բոլոր ուսման նիւթը այնպէս կարգաւորելով, որ իւրաքանչիւր տարւոյ, իւրաքանչիւր ամսի, իւրաքանչիւր շաբթի, իւրաքանչիւր օրուան, իւրաքանչիւր ժամի անգամն նշանակած լինէր որոշեալ դաստատութեան մաս, որոշեալ խնդիր։

ՉՈՐՐՈՐԴ ԽՆԴԻՐ.

Ի՞նչպէս ամենայն բան միևնոյն ոճով ուսուցանել։

Բոլոր գիտութիւնները միայն մի բնական ոճ ունին, նոյնպէս և բոլոր ճարտարութիւնները։ Գիտութեանց և ճարտարութեանց ուսանելու եղանակը այնքան զանազան չեն, որ պահանջէին նոր ոճ։ Վարժապետի գիտութիւնը և առանձին աշակերտների ընդունակութիւններին յարմարուիլը բոլորը միաւորում է։ Ուստի պէտք է բնական ոճին հետևելը, այսինքն ամենակարճ ընթացք բռնել։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՆԴԻՐ.

Ինչպէս շատ երեխայ խմասրը քաջալերել դէպ բարեվարք։

Հաստ գիրքը և շատ բառերը քիչ են օգնում և առաջ տանում. հացի մի կտորը և սակաւ ինչ գինին շատ անգամ առաւել օգտաւէտ են, քան զանազան կերակուրների և խմիչքների առատութիւնը. մի ոսկեայ դրամը թանգ է, քան շատ պղնձէ դրամներ։ Սենեկայ փիլիսոփայն ճշմարիտ է ասում՝ "սերմերը չափաւորութեամբ պէտք է ցանել. բայց նոքա պէտք է լաւերից լինին"։ Մարդոյս, ինչպէս վերը ցոյց է տուած, ամենայն բան իւր մէջ պարունակում է՝ նա միկրոկոսմ (փոքր աշխարհ) է, և հարկաւոր է միայն լուսաւորութիւն այդ "փոքր աշխարհի"։ Լուսաւորելու համար շատ անգամ բաւական է միայն մի ճառագայթ։ Ուստի լեզուների և ճարտարութիւնների դասագրքերի մէջ պէտք է բացատրուած լինին

միայն հիճառական կանոններըը, որոնցից մնացած լուծերը բղխում է, որոնց մեծ մնացած բոլորը կցորդում է։

ՎԵՑՆԵՐՈՐԴ ԿԱՆՈՆ։

Ի՞նչպես պէտք է կարճաբանել որ մի քերթուածքի կատարել երթալ և մինչև անդամ երեք աշխատութիւն։

Բնութիւնը ուսուցանում է, թէ միևնոյն ժամանակ ու մի գործունէութեամբ կարելի է շատ գործեր կատարել։ Տարբ մի և նոյն ժամանակ աճում է և վերև, և ներքև, և կողմնակի. արմատը, կեղևը, միջուկը, տերևները, և այլն միասին աճում են։ Կենդանւոյ մէջ բնութիւնը մի և նոյն է ցոյց տալիս։ Ամբողջ կենդանին մի ժամանակին է աճում։ Եւ իւրաքանչիւր անդամը ուրիշ ուրիշ գործակատարութիւններ ունի։ Ոտերը մարդուն մեն են ածում, յետ ու առաջ են տանում նորան։ Թոքերը մի և նոյն շնչառութեամբ կազդուրում են և՛ սիրտ, և՛ ուղեղ, և՛ բոլոր աղիքն, նպաստում է խօսակցութեան ևլն։

Նոյնը տեսնում ենք և արուեստաւոր մարմինների մէջ։ Արեգական ժամացոյցը մի և նոյն ժամանակ ցոյց է տալիս և ժամանակ ղողիակոսի այն նշանը՝ որի մէջ արեգակը կանգնած է, և օր ու գիշերի երկարութիւն և լն։ Կառքի կեղևը որպէս լծելու համար է, նոյնպէս և կառքի պատուհասը տալու և առաջ ու ետև շարժելու համար։ Լաւ բանաստեղծը և՛ զմայլեցնում է, և՛ խրատում է մի և նոյն ժամանակ։

Մանկանց կրթութիւնը ևս այնպէս պէտք է լինի յօրինուած, որ մի աշխատութիւնը շատ պատուղներ բերէ։ Սորա համար ընդհանուր կանոն է, որ բոլոր՝ ինչ որ մօտիկ յարակցութիւն ունին միմեանց հետ՝ միաւորուին, զորօրինակ բառը իրի հետ, կարդալը գրելու հետ, քերականական վարժութիւնները տրամաբանական վարժութիւնների հետ, ասինքն ոճի վարժութիւնների հետ, յետոյ ուսանելը ուսուցանելու հետ, ևլն։

Ուրեմն բառերը պէտք է միայն ուսանել և ուսուցանել իրերի հետ միաւորելով։ Ի՞նչ օգուտ կարող է բերել բառերի գիտութիւնը առանց իրերի գիտութեան։ Որքան ամեն մի մարդը իր տեսել է և գիտէ, այնքան նա կարողանում է և իւր իսկական միտքը և համոզմունքը արտայայտել։ Ուստի պէտք չէ թոյլ տալ աշակերտներին, որ նորա ասեն այնպիսի բան, որ չեն հասկանում։ Թուաբանների վարժութիւնը ուսումնարանական կրթութեան համար օրինակ կարող չէ լինել։

Այս կանոնի զօրութեամբ, ուսումնարանից պէտք է արտաքսուին բոլոր այնպիսի գրքերը, որոնք միայն բառեր են ուսուցանում՝ ու ոչ նորա հետ և իրեր։ Միայն իրականը օգտաւէտ է։

Կարդալը և գրելը միշտ պէտք է միաւորուած լինին։ Ինչ որ աշակերտը ուսանում է, նա պէտք է և գրել գիտենայ ղայն. ինչ որ նա տեսնում է, նա պէտք է նկատել իմանայ։ Այս բանը երեւակայութիւն է զարգացնում և վստահութիւն է տալիս։

Ոճի բոլոր վարժութիւնները պէտք է կատարուին յայտնի և դաստան մէջ մեկնուած նիւթերի վերայ. վասն զի ոճը իւր սկիզբը մտքից է ստանում և կազմուում է նորանից։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԽՆԴԻՐ.

Ի՞նչպես ամենայն քանին ազդեցան ա՛ս ազդեցան հասնել։

Այս մասին խօսուած է 16 րդ գլխում։

ՈՒԹԵՐՈՐԴ ԽՆԴԻՐ.

Ի՞նչպես ուղղացնել յատկանշութիւնը քոլոր արբելութենը։

Զկայ ոչինչ այնքան ունայն, որքան այնպիսի շատ բան ուսանելը, որն որ ապագայում ոչինչ օգուտ չի բերել։ Միայն նա է խնաստուն, ով որ օգտաւէտ բան գիտէ։ Այս ճշմարտութիւնը ի մտի ունենալով, ուսումնարանական գործունէութիւնը կարելի է թեթևացնել՝ ուսումնարանից հեռացնելով բոլորը, ինչ որ անպէտ, օգուտ և մանրամասն է։

Ի թիւս անպէտներէ պէտք է դասել բոլոր, ինչ որ չի օժանդակում բարեպաշտութեան և բարոյականութեան, և մինչդեռ առանց նորա կրթութիւնը ոչինչ չի կորուսանում և կանոնաւոր կերպով կատարուում է։

Օրաբ պէտք է համարել բոլորը՝ ինչ որ այս կամ այն ուսանողի բնութեան ընդդէմ է։ Խոտերը, ծառերը, կենդանիները զանազան ընդունակութիւններ ունին, մէկի հետ այսպէս պէտք է վարուիլ, միւսի հետ այլապէս։ Ամենայն բանը մի և նոյն դործի համար պիտանի չէ։ Նոյնը պէտք է ասել և մարդկային յատկութեանց մասին։ Ի բնէ առատապէս պարգեւածը ամենայն արդիւք չաղթում է։ Իսկ շատերին մի քանի առարկաները անմատչելի են։ Ուրեմն՝ բնութիւնը ուր չի խոնարհեցնում՝ այն կողմ մի ծռեցնէք։

Այսպէս և խելարութիւն կրնէր, եթէ մի ոք կամենար աշակերտներին միել բոլոր ճանաչմանց։ Ինչպիսի լարութիւնից։ Շատ բաւական է, եթէ ուսումնարաններում ծանօթացնում են իրերի դլխաւոր տեսակների հետ և նոցա նշանաւոր գործողութիւնների հետ. մանրամասնութիւնները պէտք է թողնուին մասնաւոր պարապմունքների համար։ Ով որ կամենում է մի երկիր նուաճել, նա չի պաշարել ամենայն դիւղը առանձին՝ իշխելու համար, այլ ըստ կարողութեան ընդհանուր պատերազմ կրբանայ, և այդպէս կտիրէ բոլորին, որի հետ որ յետոյ կարող է մնծիկ ծանօթանալ։ Այս հայեացքով դրականապէս ինաս են բոլոր հասս բառարանները, ուր կարելի է ամենաչնչին բառերը գտնել. վասն դի նոցա գործածութիւնը միանդամայն սահմանւում է յատկացուիմութեան։ Իսկ արմատ բառերի ժողովածուները շատ օգտաւէտ են, վասն դի նոցա պարունակութիւնը դիւրին ըմբռնուում է։

(Շարունակելի։)

ՊՕԼԿՈՎՆԻԿ ՅՐԻՑ

Ես ծնվել եմ Բորնէօ կղզումը։ Իմ հայրս, ծառայելով իւր կեանքի ամենալաւ ժամանակը Հասարակապետութեանը Ամերիկայի միացեալ նահանգների, վերջապէս թողեց ծառայութիւնը և կամեցաւ իւր վերջին օրերը անցկացնել Բորնէօ կղզումը, ինչ տեղ մի քանի տարի առաջ սպակվել էր։

Ես ամենափոքրն էի երեխաներից և մի քանի շաբաթական էի, երբ որ հայրս թողնելով ծառայութիւնը՝ բնակվեցաւ իւր փոքրիկ հողումը։ Մեր տունը մի կողմից նայում էր դէպ ի ծովը, իսկ միւս կողմից դէպ ի բարձր և մեծ անտառը, որը որ լիքն էր մեծ տեսակ կապիկներով։ Այդ անասունները, հակառակ միւս անասուններին, որոնք փոքր ի շատէ վախենում են մարդից, վըսյ են տալիս մարդի չվախենալով մինչև անգամ հրացանից։ Ունենալով բաւականին ընական խելք, նոքա իւրեանց յարձակումը կատարում են առաջուց մտածած ճանապարհներով։ Ամենաղօրեղները նոցանից՝ զինուորված հաստ փայտերով, կաղմում են դլխաւոր մասը զօրքի, իսկ միւս բազմութիւնը ամեն կողմից քցում են քարեր թշնամու վերայ, և այնպէս ուղիղ՝ որ ոչ մէկն էլայ դուր չի անցկենում։ Երբեմն կապիկները թաք կենալով ծառի ճիւղերի մէջ, թոյլ են տալիս թշնամուն անց կենալ իւրեան մօտովը, և յետոյ նետի արադութեամբ վեր են դալիս հողի վերայ, թռչում ուսերը, և սուր չանկերով դուրս են տալիս աչքերը և կրծոտում ղլուխը։

Ահա, սիրելի բարեկամ, ինչպէս են կապիկները իմ հայրենիքումը։ Բոլոր բնակիչները Բորնէօ կըղզու և մեծ մասը Եւրոպայի հասարակութեան հաստատ համոզված են, որ այդ կապիկները առանձին տեսակ վայրենի մարդիկ են, և այս մըտքումը նոքա աւելի ևս հաստատվում են, որ այդ կապիկները, որոնք սաստիկ կատաղած են մեծ մարդկանց դէմ, ցոյց են տալիս առանձին սէր դէպի երեխայքը և կանայքը, որոնց շատ քիչ են սպանում, այլ միշտ տանում են իւրեանց անտառների խորքը։ Շատերը և շատ ուսումնական բնագէտները՝ այս վերջին անցքը առակ էին համարում. բայց հիմայ ոչ ոք չի կասկածում դորա ճշմարտութեան վերայ, և ես ինքս դժբաղդարար կարող եմ դառնալ դորան անքակտելի ապացոյց։ Ես ասացի ձեզ՝ որ մի քանի շաբաթական էի, երբ որ հայրս բնակվեց իւր դիւղումը։ Առաջին չորս տարին կմ կեանքիս ոչ մի տպաւորութիւն չթողնին իմ յիշողութեան մէջ, և այդ պատճառաւ էլ կարող եմ անուանել նոցա բաղաւոր, որովհետև լսլոր միւս յիշատակներս ինչպէս սուր դա-

նակներ քրքրում են սիրտս։ Ես գաւազ չորս տարեկան։ Մէկ առաւօտ խաղ էի անում իմ դայեակիս հետ մեր տան մօտ։ Մի թռչուն կապիկները երևեցան անտառիցը և մեզ շրջապատեցին։ Իմ դայեակիս ձայնին մեր ծառաները դուրս վազեցին, բայց ուշ էր։ Կապիկները փախցրին մեզ անտառի խորքը, ու շուտով ծառաների գոռգոռոցը անհետացաւ իմ ականջից։ Դայակիս դրութիւնը անյայտ մնաց ինձ համար. իմ միտս չէ ինչպէս մենք բաժանվեցինք։ Առաջին օրերը իմ կեանքի ծածկված են մառախուղով, և ինձ երևում է ինչպէս վաղուցուայ տեսած երազ, որ իմ յափշտակող ներս զարմանալի արագութեամբ վազում էին հետս։ Կապիկը՝ որը բռնել էր ինձ, երևում էր որ ամեն կերպիւ աշխատում էր ինձ պահպանելու. որովհետև երբ որ բոլոր խումբը կապիկների կանգնեց, չորս կողմը անտառով շրջապատած կանաչ տափուտը, ինձ անվնաս դրեց խոտի վերայ։ — Միտս է, որ այդ անասունները սաստիկ ձայն բարձրացրին, և մէկ մեծ կապիկի գալուց յետոյ բոլորը լռեցին, այդ կապիկը վեր առաւ ինձ և տարաւ հետը։ Չգիտեմ ինչ պատահեց հետս ինձ յափշտակելու առաջին օրերը. իմ յիշատակներս պարզվում են արդէն այն ժամանակից, երբ որ ես բոլորովին սովորեցի նոր կեանքին։ Իմ յիշողութիւնս նկարագրում է մեծ և հանդիստ ցաղին, որ տեղ ես կեանում էի կապիկի հետ։ Մէկ անկիւնում ածած խոտը մեր անկողինն էր։ Ինձ սնուցանող կապիկը ինձ շատ սիրում և փայփայում էր։ Ըզգիտեմ, հասկանալի՝ կլինի ձեզ արդեօք այն զգացմունքները, որոնցով լցված էր այն ժամանակը իմ հոգին։ Արդեօք ձեզ զարմանալի չի՞ երևիլ, եթէ ես ձեզ կը խոստովանուիմ, որ իմ սնուցչի սիրուն ես պատասխանում էի սիրով, փայփայանքին փայփայանքով։ Մոռանալ, որ ես չորս տարուց աւելի չէի, և այդ քնքուշ հասակումը մարդուս հոգին դեռ չի ունենում այն ջոկողութիւնը, որը յետոյ այնպէս պարզ զանազանում է մարդին միւս անասուններից։ Նայեցէք ուշադրութեամբ երեխու վերայ, որին կերակրում են պատկով. դուք կը նկատէք, որ նա բոլոր իւր սիրտը զարձնում է դէպի այն անշունչ առարկին, և այն ժամանակը ձեզ աւելի քիչ զարմանալի կերևի իմ սիրտը դէպի այն անասունը, որը ունի փոքր ի շատէ խելք։

Ես չորս տարուց աւելի կացայ այդ դրութեան մէջ. շուտով ես սովորեցի հեշտութեամբ բարձրանալ ամենակոկ և ամենաբարձր ծառերի վերայ. մի խօսքով մանգալու ժամանակը ես շատ քիչ էի մնում իմ սնուցչից, որը ուրախանում էր իմ առաջադիմութեանը նայելով. մի և նոյն ժամանակը նա չէր արդելում ինձ հեռանալ ղաղիցը մենակ. ուրախանում էր, երբ որ ես նա էի դառնում, և փայփայանքով ընդունում էր ինձ, երբ որ ես բերում իի որս, որը բաղկանում էր ընկուզից, բանանից և ուրիշ պտուղներից. Զարմանալի է, որ միւս կապիկները, որոնք պատահում էին հետս, ինձ չէին վնասում. կարծես թէ այդ վայրենի ազգը ինձ որդեգրել էր իմ սնուցչի պատուի համար։ Ես բոլորովին մոռացել էի խօսիլը իմ սնուցչին, չըգիտեմ ի՞նչ պատճառաւ անուանում էի Տուտու, և նա իմանում էր իւր անունը, Այս միայնակ ձայնն էր, որը նմանում էր մարդկային ձայնին։ Ես ամեն բանով նմանում էի իմ սնուցչին. ես զոռում էի և ճչում էի ինչպէս նա։ Իմ անտառումը զանված ժամանակս ես բոլորովին միտս չէի բերում իմ ծնողքս, և բաղտաւոր էի։ Տուտուն ոչ մի րոպէ հեզ չէր փոխվում դէպի ինձ. և չէի հասկանում նորա լեզուն, բայց նորա քնքուշ փայփայանքները և սէրը դէպի ինձ՝ հասկանալի էին իմ երեխայական սրտիս համար։ Ես իմ կեանքումս շատ քիչ կին եմ տեսել այդպէս հանդարտ, բարի, քաղցր և ուրախ լինութեան տէր։ Աւաղ, այդ բարի անասունի բարոյական գերազանցութիւնը գնում է վրես սաստիկ մեղք, որը կարելի է մահից յետոյ էլ կը տանջի հոգիս,

(Շարունակելի)

ԲԱՐՈՑԱԿԱՆ

ԱԶԳԱՑԻՆ ՄԱՂԹԱՆՔ

Ո՛վ Հայր մեր և Աստուած,
Միշտ բարի և գթած՝
Կեցո՛ Հայութիւն,

Մի՛ թող Տէր մեզ իսպառ,
Անիրընամ և Թշուառ,
Դու միւսանգամ պայծառ
Արա Հայութիւն,

Տէր մեզ գրթացիր կըրկին,
Տուր հոգի իմ ազգին
Միաբանական,

Որ քո փառքիդ համար,
Պարձեալ դէպի արդար
Գրնանք ճանապարհ.
Քեզ պաշտել ազատ,

Մաքրիր Տէր Հայի
Եւ սիրտ և հոգի՝
Հոգւոյդ կրակով,

Որ ճշմարտութիւն գգան.
Նե զուգութիւն
Կապէ ազգութիւն
Ամուր շաղկապով։

Յ. Ոսկանեան։
Ի Դպրոց։

ԴԻՄԱՌՆԱԿԱՆ ԽՕՍՔ

Քոյր իմ քնքոյշ, ուր դու թռչիս,
Թևթևաքայլ գնաս ուր՝
Անմխիթար զիս թողնելով.
Ասա, խնդրեմ, փախչիս ուր,
Ցնորք արդեօք, Նատալիա,
Եթէ երազ կ'տեսնեմ,
Որ քեզ մահուան դագաղի ծոց,
Իբր զրած կ'տեսնեմ.
Սիրուն աչերդ էր կափուցած,
Ակնարկ մի անգամ չես ուղեր,
Լեզուդ անխօս էր մեայ լուռ.
Բառ մի գոնեա չարձակեր.
Քո սառնացեալ կուրծքի վերայ
Ինչու թևերդ ամփոփած՝
Ա՛յլ չես մեկներ դէպ ի քո քոյր
Գրկել՝ գրկուել սրտաբաց,
Ո՞ ցաւալի այս տեսարան.
Զարմիկ պլ ևս չունիս քոյր,

Արեամբ լեցուեց խեղճուկիս սիրտ,
Կ'թալկանամ տես իմ քոյր,
Կերթաս յինէն անուշ քուրիկ
Ի գերեզմանն, թէ յերկին,
Ո՞վ կ'տար ինձ քեզ հետ, քոյր իմ,
Կալ և մնալ անմեկին,
Արեգին լոյս թող ինձ համար
Այսուհետև մութ լինի.
Առանց քեզի, իմ հարազատ,
Աշխարհն թող ինձ սուգ լինի,
Խեղճ որդեկիդ դարձուր գոնէ
Քաղցրահայեաց քո աչերդ,
Որ առանց մեր պիտի մաշուիլ.
Եւ ինձ մաշել իրա հետ,
Կենակցութեան թէ և այս
Ընկալար լուծ քո վերայ.
Բայց ի՞նչ օգուտ, տրտում տխուր
Ցեսար վիճակ անխնայ . . . . . ,
Ո՛հ, ո՛ր ցաւս պատմեմ լեզուաւ,
Որ անհամար են անթիւ.
Ո՞ւր դու արդեօք թողուս քո քոյր,
Ցաշխարհ, թէ ի կեանս լի ախտիւ,
Ցաշխարհ, այո, ուր ինձ մնայ,
Բռնած որդւոյդ ձեռներից
Միայն շլրմիդ այդ ելանել
Արցունք հոսել ցաւալից,
Ո՛հ, ցաւ խեղճիս, ցաւ ինձ, քոյրիկ.
Ո՛ւր կ'թողուս միայնակ,
Ինձ էլ քեզ հետ տար գերեզման,
Քեզ հետ ննջել հողոյն տակ,

* *

Երկինք կնքեց ինձ այս վճիռ,
Թողուլ՝ ձգել այս աշխարհ.
Մի՛ դու սգար, մատաղ իմ քոյր,
Մի՛ քեզ առներ անդադար.
Դագաղի մէջ թէ և այս
Դնիմ անշարժ անմռունչ,
Թէ և մահուան դալուկ սարսուռ
Կնքեաց արգել իմ մրմունջ.
Սակայն պիտի զարթնեմ, քոյր իմ,
Երբ երկնային հնչէ փող,
Իսկ այժմ ի մութ գերեզման
Պարտիմ գնիլ գառնալ հող։

Դրաստամատ քաղցրիկ որդեյս
Քոյը իմ պահէ, պահպանէ,
Կ'տան երկինք, որ նա քեզնից
Սուդ այդ և վիշտ կ'վանէ։
Ես այժմ յերկին անդարձ գնացիւք,
Կամիմ գնալ, քոյը իմ քոյր.
Ապա օն և դու որդեկիս հետ՝
Տուր ինձ վերջին քո համբոյր։

Օրհոցք Մարիամ Տէր Գաբրիէլեանէ։

ի 15 Օգոստոսի 1870 ամի
ՅԱղէտանքրաքել։

Ա Զ Գ Ա Ց Ի Ն

ՆՈՒԻԷՐ

Պարոն Մատթէոս Տէր Պօղոսեանց 'նորքեցի մի հարիւր րուբլի նուիրեց 'ի նպաստ շինուածեան նորակառոյց Ա'եմարանի Մայր Եկեղեցոյս։

Հրապարակաւ կը յայտնեմք մեր շնորհակալութիւնը յիշեալ Պարոնին։

ՅՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱԾ
Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑՍ

(Շարունակութիւն։)

Ի ՆՈՐ - ՆԱԽԻՋԵՒԱՆ։

	ր.
Սահակ Տարտախանեան	1
Յովհաննէս Զախեան	2
Գէորգ Պօղոսեան Խամիրանեան	15
Եղբայրք Ալաճալեանք	15
Խաչերես Ալաճալեանց	5
Յովակիմ Խլեղեան	10
Կարապետ Իսկիւտամեանց	2
Սարգիս Շարբընիկեանց	2
Զաքար Օզուռեան	1
Երկու եղբարք Ռափայէլ և Սաղաթիէլ	6
Միքայէլ Ծառուկեան	2
Յովհաննէս Ճարտարեան	2
Միքայէլ Բօլեան	3
Ն աղարէթ Խոճա - պարոնեան	2
Այրի Հռիփսիմէ Պլիկովեան	5
Յակոբ Աստուածատուրեան Շուչօլեան	5
Յովակիմ Շամամեան	3
Այրի Կոհարինէ Տէվէճիովեան	3
Ադամ Թէմիրեան	3
Սերոբէ Տէվէճեանց	3
Երեմիայ Տեաչքեան	2
Մկրտիչ Պուտքեան	2
Գասպար Մօուպաշեանց	1
Պօղոս Շիրինեանց	1
Գրիգոր Բաղդասարեան Սարըյեանց	1
Սիմէօն Աւետիքեան Սուպաշեան	1
Թորոս Ապէյեղեան	1
Պետրոս Հիւանդեան	1
Պաղդասար Պալեան	10
Եւայ Զէյթունեանց	10
Փ. Քարաքաշ	5
Մ. Բապասեանց	5
Սահակ Թուզեան	3
Գասպար Յարութիւնեան	5
Յօհաննէս Մասլեան	5
Յովհաննէս Իվանեան	3
Վարդերես Զէյթունեանց	1
Խաչերես Տիեաչքեան	1
Կարապետ Միքայէլեան Թուսունեանց	3
Պարոն Դուզոսլեան	1
Յովհաննէս Մարկոսեան Փոխեանց	25
Գասպար Մարկոսեան	10
Գաբրիէլ Մկըռեանեան	10
Դուկաս Կիւմիւշլեանց	5
Մարիամ Գաբրիէլեան Պապովեանց	5
Անյայտ ոմն	6
Սարգիս Գիտեան	5
Վարդերես Ախչեան	3
Պետրոս Քեչիճեանց	2
Աննայ Փանոսեան Խաչիկեանց	2

(Շարունակելի։)

ԽՆՁԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՐԱՊԱՊ ԱՂԱՍԳՐՅ։

Ներկայ տասնևվիններորդ դարս ուսումնական-նուէրների դրոշը իր ուսին առած կըփայլի. Հայկազեան որերաց ոդին ալ կարծես թէ ներքին աղդեցութեան եռանդ մը ունեցած է իր սրտին մէջ՝ նոյն դրօշը իր ձեռքին բռնած պարզելու. արդէն Օսմանեան Պետութեան ներքև գտնուած Հայաբնակ քաղաքներ ամենքն ալ աղդու բորբոքով վառուած ամեն տեղ դպրոցներ և ուսումնարաններ կան հաստատուած՝ թէ արական և թէ իգական սեռերու համար. որոց շարքի մէջ կգտնուի և մեր Կարուց քաղաքը և վիճակը, որ Օսմանեան Տէրութեան սահմանագլուխը մէկ անկիւն մը կհամարուի. քաղաքական ժողովուրդը դուրսի քաղաքներէ հաւաքուած երկու հարիւր տան չափ խումբ մը կըկազմեն.դրեթէ մեծ մասը իրանց օրական ապրուստը միայն կարող կրնան ըլլալ ձեռք բերելու. 1853 թիւէն յետ՝ ժողովուրդը իրենց բարեկացութիւնը դպրոցի համար ձեռք բերելու որքան որ իրենց աշխատանքը չըմնայեցնեն, իրենց նպատակին համեմատ հովիւ մը չըմնենալուն ըրած ջանքերէն պտուղ մը չկարացին շահիլ. թէ և իրենց կարիքին բաղդատութեամբ մեծ ծախքեր ըրին քաղաքի եկեղեցին Ի հիմանց նորոգելով՝ առաջնորդարան և վարժատուն շինելով, սակայն իրենց ցանկութեան նպատակին չէին ժամանած՝ իրենց մանկտիքը ուսման կարօտեալ մնալնուն համար. ժողովրդեան իրենց զաւակները կրթութեան փափաքները որ բորբոքած կար սրտերնուն մէջ, անիկա լրանալուն Տէր գործադիր հովիւ մ՚ալ պարգևեց Գերապատիւ Գրիգորիս վարդապետը, որ երկք տարի միջոց կըլլայ նորին սրբութեան մեր քաղաքը ընդհ ըներկը. ձեռնտուութեամբ բարեպաշտ իշխանաց քաղաքիս և հասարակ ժողովրդեան բազձանքնիս ամենն ալ տեղը հասուց, արական և իգական սեռերու ուսումնարան և դպրոց հաստատելով և բարեկարգութեան մէջ մտցնելով, որ հիմակու հինս 120ին չափ մանկտիք և ութսունի չափ օրիորդք՝ ուսման մէջ քայլ առ քայլ յառաջ կընթանան, և սորվելիքներն են մանկտեաց, Քերականութիւն, Ազգային Պատմութիւնն, Աշխարհագրութիւն, Թուաբանութիւն և Վարչա-

պրութիւն, և օրիորդաց՝ հասարակ ընթերցանութիւն, քրիստոնէական, և վարչագրութիւն. որոնք այս տարի երրորդ անդամ իրենց քննութիւնն տալով բաւական յառաջացել են թէ մանկտիք և թէ օրիորդք. նոյնպէս և Կարսի բոլոր վիճակը՝ որ կըկարօտեր հովուական ամեն տեսակ բարեկարգութեանց, այն ևս ըստ կարի Գ. Գրիգորիս հայր սուրբի ջանիւք քչիկ քչիք կարդի մտաւ քանի մը մեծ գիւղերու մէջ մանաւանդ դպրոցներ հիմնարկելով, որոնք երբէք չէին տեսած. նա մանաւանդ Հոռոմոսի վանքը՝ որ Անիի սահմանագլուխը կըգտնուի, որ վերը յիշած Թուէն սկսեալ մինչ ներկայս երկու տարի յառաջ բոլորովին խանդարուած և աւերման վիճակի հասած կար, այն ևս ջանիւք Առաջնորդ սուրբ Հօր Տէր Գրիգորիս վարդապետի անխոնջ աշխատութեամբ՝ շինութեամբ և բարեկարգութեամբ նորոգ վայելչութիւն մը ստացաւ, և որ ամենէն աւելի կարևորն էր՝ ժառանգաւորաց դպրոց մ՚ալ շինելով քանի չափ գիւղական մանկտիք անոր ծոցը ժողովելով ուսում սորվելու շարունակութիւնը գործի դրեց. որով Կարուց քաղաքի կամ վիճակի ժողովուրդ մեծ մխիթարութիւն ունեցաւ, և կյուսանք որ Նորին սրբութիւնն Գ. Գրիգորիս Հայր սուրբի անխոնջ աշխատանօք Կարս քաղաքը իր վիճակով ադգին նպատակին համեմատ Ի շարս կրնթեալ քաղաքաց մնայի. ուստի ինդրեմ Ձեր պատուական Արարատ ամսագրոյ մէկ անկիւնը տեղի շնորհէք համառօտ նամակիս հրատարակութեան,

Ձ. Ա. ՀՈՎՍԷՓԷԱՆ ԽԱՀԱՆԱՅ ՊՕՂԱՆՃԵԱՆՑ։

22 Սեպտեմբեր 1870
Ի Կարս

ԽՆՁԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՐԱՊԱՊ ԱՄԱԱԳՐՅ.

Անցեալ սեպտեմբերի Թիւ Ե. Արարատ պատուական ամսագրոյդ Թերթերի մէջ հրատարակուած Երևանայ Փոխ—Թեմական Գեր. Մեսրոպ Վարդապետի Սմբատեանց առ Հայազգիս Երևանայ գրած հրաւէրը՝ (որոյ բովանդակութիւնն էր հանել Թեմական Հոգևոր Դպրոցը ոմանց իրա-

ւացի կամ անիրաւացի բամբասանքի տակից, երբ միայն ժողովուրդը ևս կճանաչէ իւր պարտքը դէպի Ուսումնարանը ևն. Հանդերձ ի ստորև եղեալ 15 յօդուածովք, որ ի մասին ընդունելութեան թոշակաւոր և ձրիավարժ աշակերտաց, այո՝ ոչ սակաւ տպաւորութիւն ունեցաւ տեղւոյս Հայ ժողովրդեան վերայ։ Ա.յս խօսքիս ապացոյց կարծեմ՝ բաւական է մի օրուան մէջ եօթն թոշակաւոր աշակերտաց աւելանալը, յորոց երկուսը ի տարին երեսնեկան, երկուսը քսանական և երիքը տասնական մանէթով ընդունուեցան, որ առնէ ընդամենը 130 մանէթ։ Սրանցից յառաջ սկսեալ Մայիսի մէկից մինչև ամսոյս 15-ն թոշակաւորների թիւը հասած էր քառասունի, հինգ ևս յետոյ աւելացան,—52. իսկ բոլորի թիւը այժմ 8 ն աղքատ ու որբ ձրիավարժից հետ.—60. Հետզհետէ էլ շատանալու վրայ են. ուրեմն յոյս կայ մինչև տարւոյս վերջը Դպրոցը ունենայ 80 թոշակաւոր և 20 ձրիավարժ աշակերտներ, Փառք և պարծանք կլինի դպրոցին, եթէ կարողանայ 100 աշակերտ օրինաւոր կրթել ու դաստիարակել. բայց այս ինչով կլինի, եթէ ոչ ուսեալ և փորձառու վարժապետներով, արթուն և սրտացաւ հոգաբարձուաց վերահասութեամբ. որպիսի յուսով ծնողք ըստ իւրեանց կարողութեան չվանայելով տարեկան սահմանուած մի քանի մանէթ տուրքը, ուղարկում են իրանց որդիքը դպրոց, դեռ իրրև փորձ. Աստուած տայ շուտով բարեկարգուի, որ ժողովուրդը տաք սրտով իր ուշքը միշտ դարձրած ունենայ դէպի հոգևոր դպրոցը։ Ասացինք "դեռ իրրև փորձ"՝ վասն զի նոքա քաջ գիտեն ինչ որ այժմ պակաս է, բայց համոզուած լինելով իմ նորա և միւսի խոստմանը և յուսագրութեանը, օր ըստ օրէ շատանում են աշակերտաց թիւը. ուրեմն եթէ դպրոցը բարեկարգ վիճակի մէջ լինի, էլ ինչը կվնասէ ժողովուրդը իւր որդւոց լուսաւորութեան հայմար։ Ես որ գրեթէ միշտ ժողովրդի կեանքի մէջն եմ գտնուում, հաղար անգամ լսած եմ, որ նա պատրաստ է ոչ միայն այն տալու. ինչ որ իրանից կպահանջեն, այլ և կամաւոր առատ ընծայաբերութիւններ առնելու, ստորագրութիւններ բանալու, վաճառաշահութիւնից մասն հանելու, կտակարարներից բաժին ստանալու, ի հիշատակ հոգւոց հանգուցելոց փոխանակ հացկերութի՝ դպրոցը շահելով միմեանց օրինակ լինելու և այլ զանազան օգտաւէտ աղբիւրներ գըտնելու, որով դպրոցը կարողանայ ժամանակին ապահովուած լինել մի այնպիսի գրամագլխով, որ էլ սորան նորան չկարօտելով յառաջ տանէ իւր ազատ քայլը. գեղեցիկ ցանկութիւն. —ժողովրդի այս տեսակ զուարճի ցանկութիւնը գլուխ բերելու համար, թէ ինչ է պակաս մնում դպրոցին, այժմէն համար տանք։ Նորա պահանջը շատ դժուար բան չէ, որ եթէ կատարուի, իւր ցանկութեանը հասած է։ Նա խնդրում է տպագրուած մի փոքրիկ տետրակ միշտ իւր աչքի առաջը ունենալու. միտքն ինչ. այս թէ՝ ինչ նպատակի է ծառայում իւր ուսումնարանը. ինչ պարտք և իրաւունք ունին հոգաբարձուքը և ինչ պարտք վարժապետները. որպիսի ուսումնարաններում պիտի աւարտած լինին վարժապետները իւրեանց ուսման ընթացքը և որպիսի վկայագրով. ինչ օգուտ կամ վնաս կարող է բերել մէկը միւսի դասով պարապելը, կամ մի վարժապետ եթէ միայն տակար չէ, և ամուսան մէջ մի քանի անդամ չետ է մնացել իւր պաշտօնից*), ինչով պիտի նա տուլ, ի հիշատակ հոգւոց հանգուցելոց փոխանակ հացկերութի՝ դպրոցը շահելով միմեանց օրինակ լինելու և այլ զանազան օգտաւէտ աղբիւրներ գըտնելու, որով դպրոցը կարողանայ ժամանակին ապահովուած լինել մի այնպիսի գրամագլխով, որ էլ սորան նորան չկարօտելով յառաջ տանէ իւր ազատ քայլը. գեղեցիկ ցանկութիւն. —ժողովրդի այս տեսակ զուարճի ցանկութիւնը գլուխ բերելու համար, թէ ինչ է պակաս մնում դպրոցին, այժմէն համար տանք։ Նորա պահանջը շատ դժուար բան չէ, որ եթէ կատարուի, իւր ցանկութեանը հասած է։ Նա խնդրում է տպագրուած մի փոքրիկ տետրակ միշտ իւր աչքի առաջը ունենալու. միտքն ինչ. այս թէ՝ ինչ նպատակի է ծառայում իւր ուսումնարանը. ինչ պարտք և իրաւունք ունին հոգաբարձուքը և ինչ պարտք վարժապետները. որպիսի ուսումնարաններում պիտի աւարտած լինին վարժապետները իւրեանց ուսման ընթացքը և որպիսի վկայագրով. ինչ օգուտ կամ վնաս կարող է բերել մէկը միւսի դասով պարապելը, կամ մի վարժապետ եթէ միայն տակար չէ, և ամուսան մէջ մի քանի անդամ չետ է մնացել իւր պաշտօնից*), ինչով պիտի նա տու-

(*) Երանի՛ թէ մեր Ազգային ուսումնարաններում Պ. Պ. ուսուցչաց շատ անդամ իւրեանց անձնական գործոց պատճառաւ դասերը Թողնելու վնասակար սովորութիւնը իսպառ կարճուէր, եւ հարիւրաւոր հոգի հեռաւոր եւ մերձաւոր տներից ոչ միայն ի զուր կօշիկ մաշելով, այլ մանաւանդ թէ իրանց ամենաթանդ ժամանակը կորցնելով չգային դասատան մէջ վիզները ծռած սպասէին ուսուցչի իրրեւ իւր ազատ կամքիցը կախուած զալստեանը, ու ողորմելիքը Թափուր իւրեանց մտաւոր շահից դուրս, գնային այն տեղից։ Ո՞րպիսի ցաւալի՛ վիճակ. դիցուք թէ նոցա հասակը տակաւին չէ ներում ճանաչել իրանց ապագայ օգուտն ու վնասը։ Արդեօք քան զայս աւելի ծանր պատասխանատուութիւն կայ առաջի խղճի մարդկութեան. եւ մինէ ուրիշ գործերը աւելի մեծ ու հարկաւորագոյն են քան թէ ուսումնարանի գործը, որ զոհ պիտի գնայ ամեն մի չնչին բանի համար։ Առաջին գործը ուսումնարանն է. միւսները երկրորդական, երրորդական են. որոնք

ժի, և ի՞նչով իրախուսուի, եթէ աշխատել է միշտ և ցոյց տուել տարուան վերջը լաւ պտուղ։ Ի՞նչ և ի՞նչ պիտի լինին ուսանելի առարկայքը և քանի՞ լեզուներով. քանի՞ դասատուն պիտի բաժանուի, և իւրաքանչիւր դասատան մէջ իւրաքանչիւր առարկաներից ո՞րչափ պիտի անցնեն աշակերտք մի տարուան ընթացքում, և ո՞րպիսի դասագրքերի վերայ։ Նաև բաց ի աշակերտաց տարեկան թոշակադրամը և ժողովրդի կամաւոր նուիրագործութիւնը՝ Մայր Աթոռի կողմից նուիրուած ի՞նչ հաստատ աղբիւրներ պիտի ունենայ դպրոցը ևլն. ևլն. իսկ ինչ որ կվերաբերի աշակերտաց ընդունելութեանը, արդէն հաճելի է ժողովրդին յիշեալ գեր. Մեսրոպ Վարդապետից առաջարկուած 15 յօդուածով կանոնները. և այն հիման վերայ ևս տալիս են շատերը իրանց որդիքը ուսման. բայց շատերն էլ սպասում են տեսնել սրանց հետ միասին սահմանափակուած և միւսները, որպէս զի անկասկած լինին, և այնպէս ջերմեռանդ սիրով ու կատարեալ յուսով յառաջ խաղացնեն իւրեանց զաւակունքը ուսման փառաւոր ասպարիզի մէջ։ Փառք և պատիւ Աղգայնոցս, որ օր ըստ օրէ իւր բարոյական և մտաւորական օգուտը ճանաչելու վրայ է. մեղք այնպիսեաց, որոնք խոչընդոտն լինելով կզրկեն ժողովուրդը այս օրինակ հասկացողութիւններից և կդարձնեն բարենպատակ ճանապարհից։

Աւետիք Չէմ՝ Համարում Մայիսի մէկից մինչև ցայսօր այս սուրբ ըուրաստանիս մէջ հաւաքուած բանաւոր ծաղկանց թիւը իւրեանց տարեկան արդեանց հետ մի առ մի այս տեղ նշանակել, զոր խնդրեմ լազմնաշխատ Խմբագրութիւնէդ՝ սորա հետ միասին տեղի ունորհել՝ յաջորդ ամսատետրակիդ

պիտի անշուշտ ջնջել առաջնոյն. եւ ինչ գոհ, ինչ բարերարութիւն պ. ուսուցչի կողմից, քանի որ նորա իսկական պարտականութիւնն է, եթէ ոչ ընդհանուրի օգուտը մասնաւորից միշտ բարձր դասելու դիտմամբ, դոնէ փոխարէն այն վարձուց, որ նա ստանում է. այլապէս չէ կարելի։ Ուրեմն պէտք է աշխատել, որ ասեն «Արժանի է մշակն իւրում վարձու»։ Ով այսպէս չէ հասկանում եւ ընդունում, մի խօսքով նա վարժապետ չէ, ի զուր է այդ կոչումը վրեն առնում, ինքը շահվում եւ ուրիշներին վնասում։

Աղջաշահ Թերթերի մէջ, առ այժմ իրրև առհասարակ յայտ՝ ի կատարումն Աստուծով ցանկութեան սրտից մերազնեայց քաղաքիս և յառաւել ոգևորումն նոցին առ այս հետաքրքիր խնդիր։

Վերակացու Թեմական Դպրոցին Երևանայ

Սիմէօն Գ. Փիլիպպոսեանց։

ի 24 Հոկ. 1870 ամի
Էջմիածին։

ԱՇԱԿԵՐՏԱՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ Հ. ԵՐԵՒԱՆԱՑ.

Թոշակաւորք.

Համ.		ռ.
1	Ստեփաննոս Գէորգեան	30
2	Վարդան Տէր Սարգսեան	30
3	Երուանդ Մկրտչեան	30
4	Գէորգ Ստեփաննեան	30
5	Աղէքսանդր Յակոբջանեան	30
6	Համբարձում Տէր Յովհաննիսեան	20
7	Կարապետ Մեսրոպեան	20
8	Աբրահամ Սարգսեան	20
9	Անտօն Յովհաննիսեան	20
10	Մկրտիչ Տէր Մարտիրոսեան	20
11	Յովհաննէս Եղիազարեան	20
12	Մարտիրոս Դաղեան	20
13	Համիր Մելիք Փաշայեան	20
14	Ստեփան Գէորգեան	20
15	Ստեփան Յօհաննեան	10
16	Յակոբ Սարգսեան	10
17	Մարտիրոս Սարգսեան	10
18	Գէորգ Յովսէփեան	10
19	Կարապետ Տէր Սարգսեան	10
20	Յովհաննէս Գրիգորեան	10
21	Աւետիս Նազարեան	10
22	Մատթէոս Տէր Մատթէոսեան	10
23	Գրիգոր Տէր Մատթէոսեան	10
24	Սմբատ Թևումեան	10
25	Յովհաննէս Գէորգեան	10
26	Գէորգ Թադէոսեան	10
27	Եղնիկ Աղէքսանդրեան	10
28	Մկրտիչ Մկրտչեան	10
29	Համբարձում Գարրիէլեան	10
30	Աղէքսանդր Աղաջանեան	10
31	Ալիբէկ Իրզայ-Դաւլի բէկ օղլի	10
32	Վասակ Տէր Մկրտչեան	10
33	Սամսօն Եղիազարեան	10
34	Արամ Գէորգեան	10
35	Գէորգ Ստեփաննեան	10
36	Յարութիւն Սարգսեան	10
37	Յովակիմ Յովհաննէսեան	10
38	Ստեփան Աբրահամեան	10
39	Երեմիա Ստեփանեան	10
40	Կարապետ Մկրտչեան	10

41	Ադամ Գէորգեան	10
42	Մ[ի]հրան Տէր Մատթէոսեան. . . .	10
43	Դանիէլ Տէր Գրիգորեան	10
44	Համբարձում Յակոբ-Ջանեան . . .	10
45	Ղուկաս Սուքեասեան	10
46	Յովհաննէս Յարութիւնեան . . .	10
47	Աղէքսանդր Արիստակէսեան . . .	10
48	Աղէքսանդր Փիլիպպոսեան . . .	10
49	Գաբրիէլ Յովհաննիսեան	10
50	Ամբրոսիոս Ամատասեան	10
51	Ննոզ որդեգիր Մկրտչի Յակոբեան . .	10
52	Պետրոս Յարութիւնեան	10

Չդիավորեալ.

53	Մ[ի]հրան Տէր Գէորգեան . . . . .
54	Տ[իգ]րան Տէր Մատթէոսեան . . . .
55	Գրիգոր Հայրապետեան . . . . .
56	Աղէքսանդր Մուրատեան . . . . .
57	Աղէքսանդր Վասիլեան . . . . .
58	Մնացական Ոստոմեան . . . . .
59	Միքայէլ Կարապետեան . . . . .
60	Սարգիս Յովսէփեան . . . . .

Գրեալքն ընդ համարօք 2, 6, 19, 24, 28, 32, 47, 48 և 56 աչացաւութեամբ և այլ տկարութեամբ գտանին այժմ ի բացակայութեան,

Ս. Գ. Փիլիպպոսեանց

Խմբագրական Աթոռոյ ամառգրոյ

Արարատը իւր Բ. տարւոյ Ամառոյ Ը. թ. թերթերի մէջ՝ տալագրութեամբ հրատարակած է, թէ՝ Նուխւոյ Փախանորդ Արժանապատիւ Հ. Արիստակէս Վարդապետը՝ ըստ իւրումն ազդասիրական ջերմեռանդութեան՝ կարգադրած որոշած է, որ նոյն վիճակի մէջ երկու կետրոնական տեղերում դպրոցներ բացուի, որոնք իւր նկատողութեամբ և անձնադիր հոգացողութեամբ՝ անշուշտ ժողովրդոյ փափաքանաց պէտք է օժանդակեն, նոցա դեռ ևս ի ուսումնակարօտ որդւոց առաջը ուսման մէջ՝ մնաւոր և բարոյական գաստիարակութեան և կրթութեան լայնարձակ ասպարէզը բանալով, աղատաբալք պիտի գործէ իւրեանց ցանկութեան մէջ յառաջ երթալու։ Այս դպրոցները, որ բացուելու են իւրաքանչիւր գաւառակաց մէջ, սահմանեալ կետրոնատեղերում, լինելու են մեկը ի Խոշկաշէն Անապատ, որ յառաջ ժամանակաւ ևս նպաստամատոյց գտնված է իւր շրջակայ արդի գիւղական բնակչաց՝ ուսման կողմանէ, իւր շէն և հաստատ ժամանակներում, թէպէտ և ի դժբաղդութիւն աղգի՝ եօթանասուն կամ ութսուն ամաց ի վեր ցայժմ՝ աւերակ և անշէն է, ինչպէս ականատես հասակաւոր անձինք կպատմեն. և միւսը ի Գայարաշէն բաղմամարդ գիւղումը, որ դարձեալ մնա է իւր շրջակայ գիւղերին, կարծես թէ կետրոնացած է միւսների մէջ. որովհետև խոսքերնիս ուսումնարանի կառուցման վերայ է, ուստի այս տեղ վերջ դնելով վերադրնալ տեղագրութեանց՝ դեպ ի ուսումնարանի շինութիւնը դառնանք։

Ա. յժմ մեծ ջանքով Խոշկաշինու անապատի դպրոցի շինութիւնը յառաջ կընթանայ, և փոքր միջոցի մէջ կանոնաւոր կերպով դպրոցը իւր հաստատ շարունակութեան կարգի մէջ կ'մտնէ. և այս առիթով՝ նոյն մենաստանն վերանորոգութեամբ առաջնոյն նման՝ լուսաւորութեամբ կ'պարծենայ շնորհունակ ղաւակներ ծնանելով, վասն զի գաւառական աղգային մեր իրանց նախնի համակրութիւնը պահելով դէպի սուրբ Մենաստանը, դաստիարակեալ որդւոց յառաջադիմութեամբ ևս պիտի ուրախանան յոյժ։ Այս աղգային յառաջադիմութեան նպաստող ձեռնարկութիւնը, որ անակնկալ էր շատերի մօտ, եթէ նուիրեալ գաւառների մէջ ևս այդպիսի մի ազգասիրական վսեմ գործոց և եռանդից շարժումն կ'տեսնուի, մեծ ուրախութիւն առթից առհասարակ ամենեցուն, և ամենուն դէմքի վերայ ցնծութեան նշաններ փայլեցուց. ո՜հ, ո՞վ չի ատեր իւր աղգի կուրութիւնը՝ վշտակրութեամբ սրտի, և ո՞վ չէ գթար կարկինց հոգւով՝ իւր աղգային եղբօր մնաւոր և բարոյական հիւանդութեանը վերայ. անհնարին է յուսալ այդ, վասն զի նա ազգի կենդանի անդամ չէ. եթէ աւ եղբայր իւր կարեկից չէ, էէ նա անդամ ազգի, երբ տկար աղգակցի առողջութեանը զուարթադէմ չդտնուիր։

Վ. կրը ասացինք, թէ դպրոցի շինութիւնը փոքր միջոցի մէջ կատարուելն կ'տանայ, և կանոնաւոր շարունակութեամբ յառաջ կընթանայ՝ ի վարգացումն Հայ մնատաղրերնոյ, չեմ սխալվում ա-

սելու, թէ՝ և օտար ազգաց, տեղւոյն մերձակայ բնակչաց. ըստորում Արժանապատիւ Փոխանորդին նուխտաց Հայր Արիստակէս Վարդապետի սրտաշարժ յորդորանքներից յետոյ յիշատակեալ Խօշկաշէն գիւղումն, ուր ժողոված էին ժամադրութեամբ դպրոցի շինութեան համար բաղմաթիւ ժողովուրդք, նոյն ժամայն իւրեանց ազգասիրութիւնը ցոյց տալով՝ հետևեալ օրը՝ բաղմութեամբ դիմեցին դէպի բոլոր նիւթերին պատրաստութիւնը. ուր եօթն հարիւր սպղ. քար և կիսով չափ աւազ, և պղ. կարևոր նիւթերով լցրին շինութեան տեղը, նոյն ճիգը մինչև դպրոցի աւարտը յանձնառու լինելով. իսկ և այն ազգային ժողովոյ մէջ՝ որ գտնուում էր Դուզախլուբնակ կալուածատէր Թուրքաղն Աղնուաշուք Աղաբէկն՝ իւր մարդասիրական զգացմունքից ստիպուելով՝ նուիրեց վաթսուն սպղ. փայտ*)՝ կիր պատրաստելու համար, խոստանալով ամենայն յօժարութեամբ նպաստաւոր լինել շինութեանը հարկաւոր նիւթերով։ Այս ազգասիրական սուրբ հոգւոյ զգացմանց գեղեցիկ առաջարկութիւնները՝ ոչ միայն մարդոյ չէ, եթէ ոչ նորին Արժ. անձանձիր հոգարկութեանը, այն է՝ Հ. Արիստակէս Վարդապետի, որոյ անդուլ ջանացողութեամբը՝ այսօրուան օրը մեր ուսումնակարօտ ժողովուրդը նուխտոյ վիճակի՝ իրրև ի քնոյ արթնացած լոյս է շնչառում գիտութեան, ուսման և յառաջադիմութեան։

Ազգասէր Հայր՝ Ձեր այս քաղցր աշխատասիրութիւնը ազգի օգտի համար՝ անջնջելի պիտի դրոշմուի քո սիրելի ժողովրդոց սրտի վերայ, և Ձեր անունը՝ անմահ յիշատակօք պիտի յաւերժանայ նոցա մէջ՝ յորդոյ յորդիս. և երախտապարտ պիտի գտնուին՝ միշտ սիրելով զՁեզ ուղղել ի վերայ իւրեանց արիւն և հոգատար հովիւ. ուրեմն յուսով եմք բոլորեքեանքս, թէ՝ դուք ազգիդ յառաջադիմութեանը համար անձերնիդ զոհ կ'մատուցանէք։

Ներսէս Տ. Գրիգորեան Մահիկանեանց։
է Ք. Նո-ին։

(*) Այս յարգելի պատգն անձին վաթսուն սպղ. փայտն, որ իւրաքանչիւր սպղն հաշուելով երեք երեք ռուբլի արձ. բոլոր գումարն տանէ 180 ռուբլի, չ'անհշան նուիրատուին, որ ապրուքին բարեկեան անձին են ապացոյցք։

ԱԳՈՒԼԵԱՑ ԴՊՐՈՑ

Խմբագրութեան Ընթացք Ուսման.

Ամեն հասկացող անձն գիտէ որ բնութեան օրէնքները անփոփոխ են. բայց մի և նոյն ժամանակին ալ բաղմակողմանի են. ուստի և Նորանց յատկութիւնները երկրագնդի ամեն կողմը մի տեսակ չէն ներգործեր։ Ահա այս իսկ պատճառաւ նոքա մարդկային ազգի թէ՝ ներքին և թէ արտաքին կազմուածքին վրայ արած են այլ և այլ ազդեցութիւնք։ Մի տեսակ կրթութիւն և դաստիարակութիւն կ'կարծեմ թէ չէն կրնար ստանար արևմտեան Ասիացի մը և կետրոնական Ափրիկեցի մը։ Եւ ոչ միայն այսքան, հապա և հողագնդի միևնոյն գօտւոյ տակ գտնուող ժողովուրդներուն մէջն ալ տարբերութիւններ շատ կան։ Շատ անգամ էս մեր Հայ ուսուցիչներէն—աշխարհքի ամենէն ազնիւ և ամենէն դժբաղդ էակներէն լսած եմ՝ թէ այս ինչ տեղի տղայքը սրամիտ են, այն ինչ տեղի աշակերտք բթամիտ են ևայն։

Արդ այս մեքին ապացոյց որոնելու համար այս և այն կողմը չեմ կամենար ընկնել վասն զի նախ՝ դորան մանրամասն բացատրութեան համար աղեկ բնագէտ լինել պէտք է, որ ես չեմ. երկրորդ՝ դա հասկանալի է ամեն խմացող անձանց, և ընդունուած է ինչպէս մին անհերքելի ճշմարտութիւն, և կամ այլ մեքով մեկնելով կարող ենք ըսել՝ թէ կեանքի ամեն օրուայ փորձերը միշտ մեղ ցոյց կուտան դորա ճշմարտութիւնը։ Ես որ իմ կենաց հանգամանքներէն ստիպեալ հայրենեացս արևմտեան ծայրէն արևելք եմ ընկած՝ կերպով մը դժբաղդութիւններ տեսած, կերպով մ'ալ բարեբաղդութիւններ ունեցած, ֆիզիքական և մտացական օգուտներ եմ ճանապարհորդութիւններէն քաղած՝ բուն իմ նախնեաց օրը ծծելու՝ ջուրը խմելու բաղդը ունեցած, երբեմն ալ տեղ տեղ ուսուցչութեան այն վիճ կոչման արժանացած փորձով տեսած եմ շատ անգամ իմ առաջ բերած կէտի անհերքելի ըլլալը։ Ուստի խօսքս չերկարացնելով կուզեմ ըսել՝ թէ Ագուլեաց երեխաքը այլ շատ տեղերի տղայոցմէ սրամիտ երևցան ինձ, վասնորոյ ես ալ այդ երեխանց դպրոցին վրայ ունեցած կարծիքս և անոր մէջ եղած ինձ յայտնի յառաջադիմութիւնը

31

պիտի կարողացածիս չափ ստորագրեմ, որնոր . . . . . Խմբագրութիւնը Արարատ պատուական ամսագրի՝ կ'յուսամ թէ չի զլանալ իր էջերի մի անկեան մէջ զետեղել իբրև Հայ ժողովրդեան յառաջադիմութեան պատկեր և նկարագիր։

Քիչ մը վերև ասացի, որ կենացս դէպքերը զիս Հայաստանի արևմտեան սահմանէն արևելեան կողմերը քցեցին, այժմ ուրիշ խօսքով ըսելով կասեմ թէ՝ բաղդը և ճակատագիրը զիս շատ թափառեցրին նախնեաց սուրբ հողերուն մէջ, որոնք եթէ կ'ներուի ինձ ասել՝ միանալով իմ ստացած փոքրիկ դաստիարակութեանս և ուսմանս հետ շատ լաւ կերպով ծանօթացրին ինձ իմ ազգի վարուց՝ բարուց՝ սովորութեանց՝ սրտի՝ մտքի՝ զգացմանց և այլ շատ յատկութեանց հետ։ Եւ ահա այս բաղդն և ճակատագիրն էր որ այս անգամ զիս Ագուլիսու նախնեաց մի հռչակաւոր գաւառը ձգեց, ուր ուսման տաճար մը՝ սրբութեան տուն մը՝ Հայ աշակերտաց խումբ մը աշակերտհիների կաճառի մը հետ ինձ մեծ ուրախութիւն պատճառեցին, զորս - այն իմ քոյրերին ու եղբայրներին թոյղ ներեն ինձ Արտաշէսի Սաթենկի և այլ նախնի դիւցազնաց վեհութիւնները երգող ծիլերը անուանել։

Ագուլիսը յայտնի է հին Հայաստանի տեղեակ լինող անձանց՝ որ գտնվում է Դողեան գաւառի մէջ. յայտնի է նոյնպէս Կովկասեան գաւառների արդի աշխարհագրական բաժանման վերայ հասկացողութիւն ունեցող պարոններին՝ որ նա մի բանուկ ճանապարհի վրայ չէ։ Ուրեմն պէտք է ներողութիւն խնդրել՝ Ագուլեցիք եթէ ծաղիկ հաւաքող մեղուի բնաւորութիւն չունենային՝ անշուշտ իրանց վիճակին ալ պիտի համապատասխան ըլլար մեր այլ զիւղացւոց դրութեան հետ։ Սակայն փառք իրանց՝ ժիր՝ գործունեայ և այլ ազնիւ յատկութիւններով զարդարեալ բնաւորութեանց, որով նոքա իրանց յայտնի են կացուցած իւրեանց ազգին վաղուց նիւթական կեանքի յառաջադիմութեամբ ընդհանուրի վերաբերմամբ, իսկ դաստիարակական կեանքի յառաջադիմութեամբ մասնաւորի նկատմամբ։ Այս վերջին ժամանակները նոքա պետենաւով՝ որ նիւթական լուսաւորութիւնը առանց ընդհանուրի բարոյական և ուսումնական յառաջադիմութեան իրանց փառք չ'բերելէն ի զատ՝ կ'վնասէ և այս քաղաքակրթեալ դարին մէջ, շտապեցին միանալով մի սրտով և միաբանութեամբ՝ մի սիրով և զգացմունքով մեծամեծ զոհաբերութիւններ ամելով լուսաւորութեան տներ հիմնել, անց կենալով Ռուսիոյ հովանաւորութեան տակ եղող մերայնոց շուտերից, որոնցից երանի՜ օրինակ առնէին վերջիններ։ Այո՛ ես կը խոստովանիմ՝ որ Ագուլեցիների առաջ չ'կայ այն՝ ինչ որ միւս Հայ քաղաքացիների առաջը կայ։ Սակայն ժամ է այժմ՝ և շատոնց որ վերջիններ իրանց որդւոց դաստիարակելու դռները լաւ ճանաչէին։ Բայց . . . . . .

Ուսումնարանը եկեղեցի է ասած են շատ անգամ երևելի և տաղանդաւոր գրիչներ. ես ալ կաւելացնեմ՝ թէ ուսումնարանը ցորենի մէջի որոմները առանց ցորենին վնասելու քակող գործարան է, բիծերը խտակող օճառ է, կեղտերը մաքրող ջուր է։ Ուստի ինչպէս եկեղեցին՝ նոյնպէս և ուսումնարանը յաւիտենական ըլլալ պէտք են. նորանց գոյութիւնը նոյն իսկ ազգի գոյութեան հետ պիտի կապուի և կաշկանդուի. եթէ մի ուսումնարանի հիմքերը անդունդին չեն հասներ, նա գիւսւորի նման կերևնայ և կ'կորչի։ Ի դէպ ասելիք, կ'վախնամ թէ ուշ կամ շուտ Ագուլեաց ուսումնարանն ալ մեր այլ դժբաղդ դպրոցների բաղդն ունենայ. Ահա կարծիքս դորանց պիտանութեան։ Զրկարծէք Ագուլեցի համաղգի՛ք իմ՝ թէ ըսել կուզեմ որ դուք ժամանակին ստակ չէք վճարեր և դպրոցները կ'կողպտուին, քաւ լիցի, ես այսպիսի մի միտք յիշողութեանս մէջ բերելն անգամ չեմ կամենար։ Սակայն միտքս ձեր և բոլոր Հայերի նիւթական կեանքը ապահովացնելու համար ունեցած միջոցների վրայ է, որոնք արդի քաղաքակրթեալ աշխարհի ունեցածներին հետ համեմատելով շատ թոյլ և խախուտ են, և զորս այս տող բացատրիչը իմ այս յօդուածի նպատակէն աւելորդ սեպելով՝ այսքանը միայն կասեմ ինչպէս ձեզ նոյնպէս և բոլոր Հայերին՝ որքան կարելի է աշխատել՝ ճիգն թափել ժամանակի պահանջած արհեստները ձեր մէջ մտցնելու, ձեր վաճառականութիւնը Եւրոպականին մօտիկցնելու, որոնցից

բիւր բարիքներ լղհնէլէն յետոյ ուսումնարաններն ալ տևական կըլլան։

Դուք ձեր գործքերի առաջ խոչնդոտներ և արգելքներ պատահելիս մի՛ նեղանաք, դա բնական է, տարրերի սահելը կմաքրէ Հայկական ուղին, և այն ժամանակն մեր կառքերի անիւները առանց քարերի խփուելու հանդիստ կ'գնան։

Յունիսի 27ին Ագուլիս եմ եղած. ուշակերտաց և աշակերտուհիների քննութիւնը թէև վերջացած էին, բայց ուսումնարանաց վերատեսուչ մեծապատիւ Գէորգ Հախվէրտեանցէն, որոյ անունակումը մի գիշեր հիւր եղայ, Թուարանութեան ուսուցիչ Պ. Աբել Տէր Մարտիրոսեանցէն, Պ. Արսէն Թոխմախեանցէն և Պ. Սամուէլ Գիւլզատեանցէն ինձ ցոյց տրված մարդասիրութեամբ դպրոցաց բոլոր հանգամանաց տեղեկացայ, որոնք ինչպէս վերևն ալ ասեցինք՝ ղիս շատ գոհ ըրին*)։ Տասը տարեկան օրիորդք և տղայք այնպիսի թուաբանական խնդիրներ իմ մօտ լուծեցին, որ ինձ հիացրին. այնպէս գեղեցիկ իրանց մայրենի լեզուով կարդացին ըրեցին, իրանց հայրենի պատմութիւնը պատմեցին, որ ինձ զարմացրին. վերին դասատան աշակերտների վերայ Ռուսիոյ և Գաղղիոյ լեզուների մէջ այնքան յառաջադիմութիւն տեսայ, որից աւելի կարծում եմ թէ պահանջելը յարմար չէր լինիր. ամենէն աւելի ինձ յափշտակեցին մեծարու Գիւլզատեանցի ամուսնոյ հսկողութեան տակ օրիորդների գործած ձեռագործները, որին թող ներէ և թոյլ տայ իմ՝ խորին յարգանքներս սա յօդուածիս միջոցով յայտնել։ Իսկ պարոն Տեսչին և յիշեալ ուսուցիչներին յայտնելով հրապարակով՝ եթէ կ'ներեն՝ իմ շնորհակալութիւնս կ'մատուցանեմ իրանց դէպ ի նոցա ունեցած ալնիւ զգացմանս անկեղծ հաւատիքները։

Ի վերջոյ Ագուլեցւոց իրանց պարտքը կատարելուն համար գովեստներ տալն աւելորդ համարելով, կ'մաղթեմ Երկնքէն՝ որ նոքա արդի վհեհափառ Հօր սրբազան նպատակներին համաձայն իւրեանց դպրոցաց էական կէտերը աւելի օրինաւոր, աւելի մեր ազգայնութեան հիմնական տարրներին համապատասխան ուղիներով շարժելու յաջողին։

Յակոբ Գ. Կարապետեանց Ա.

ի 1870 մի ի 3ն յունիս
ի Թուրին։

(*) Այս դպրոցաց նկատմամբ ինձ մի անհամելի կէտ կայ, զոր մի առանձին յօդուածով բացատրելու մտադիր եմ շուտով։

Խմբագրութեան Ընթացք ամառուայ.

Ներեցէք . . . առաջօրէն էի մտադիր, միայն այսքան անագանութեան պատճառը աչքերիս տկարութիւնը է եղել. արդ ևս չ'մոռանալով երբ ժամանակ առ ժամանակ մտաբերում եմ՝ ի ներքոյ յիշեալ այս 1870 թուի հարցաքննութեան օրերի ցուցցած յառաջադիմութիւնը աշակերտաց Հոգևոր դպրոցի, "Ինձ համար էլի նոր Մայիս է համարուում,,,

Ուստի սրտիս ուրախութիւնիցը շարժուած, որ իսկ ականատես եմ եղած, այսօր եմ կարողանում դնել դէպ ի ձեզ ներկայ զրուցամատեան, յուսալով որ առաջի խնդիրս է՝ տեղի կ'չնորհէք Ձեր պատուական աւէտաբեր ամսագրոյ մէջ, որով անչափ գոհութիւն կընդունիք։

Գանձակ քաղաքիս Հայոց Ազգային Հոգևոր դպրոցի տարեկան հարցաքննութիւնը մայիսի 38էն սկսելով մինչև ի Յունիս ամսոյ 13ն աւարտեցաւ. հարցաքննութեան հանդէսին ներկայ էին տեղւոյս Հոգևոր Կառավարութեան Արժանապատիւ Անդամները հանդերձ քանի մի գիտնական Քահանայիւք և Հոգաբարձուքը դպրոցի. իսկ աշակերտաց ծնողներիցը և իշխաններիցը ոչ սակաւ։

Հարցաքննութիւնը դեռ չ'աւարտած 28ն Յունիսի մուտ զործեց նորոգ նշանակեալ Արժանապատիւ Ճաղորդ Դրիդոր Վարդապետ Տէր Ստեփանեան, պատուական հիւրը նոյն օրիցը անյապաղ ներկայ և քննիչ գոլով կարի կանոնաւոր հարցմունքներ առաջարկեց աշակերտացը . . . բաւականանալով այնպէս, որ բոլոր հանդիսականքը վկայեցին այնու ուսումնարանի բարեկարգութիւնը տեսնելով՝ յետ աւարտման ի բերան առեալ զբան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, այն է, "Ես եմ՝ որթն և Հայրն իմ՝ մշակ է", բարեխոսելով . . . մի համառօտ աղոթս քարոզ խօսացաւ, որոյ մէջ գոհանալով օրհնում էր զՕգոստափառ Կայսրն ամենայն Ռուսաց զԱղեքսանդր Նիկոլայևիչն, ընդ նմին և Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց Տէր Գէորգ Դ. Սրբազնագոյն Կաթողիկոսի կեանքը, որ միշտ ջանադիր են տարածել մեր ազգի զաւակաց մէջ ուսումն բարւոք կրթականութեան, ապա Հոգաբարձուացը ուսուցչաց և մտաղներամ մանկանց ևլն։

Դպրոցը ունի զերիս դասատուն, և պարտաւոր նակուած են երեք դասատանց մէջ կարգաւորեալ ընդամէնն 120 աշակերտք, ի հարցաքննութեան պատրաստականից փոխադրուելցան յերկրորդ դասատունը 10 հոգիք, և յերկրորդիցը յերրորդ 9, իսկ յերրորդից ըստ կանոնաւորութեան ուսումնարանի աւարտեալ դուրս ելին ուսման վկայականաւ 7 հոգիք. և ճեմացեալներիցը պարգեւատրուեցան 15 արիաջան աշակերտք. իսկ ուսուցչաց համար խոստմունք եղաւ առատ վարձատրութեան, յուսալով՝ որ յետագայ տարին փոխուողների թիւն աւելի կլինի, որովհետև դեռ ևս աշակերտաց տարեկան հասակները չի ներում՝։

Խոյսել Տէր Յարութեանց։

ի 11ն Հոկտեմբերի 1870 ամի
ի Գանձակ։

Խմբագրութեան Ընդդէմ առոգրոյ.

Ազգերնուս նիւթական և բարոյական կեանքը հաստատուն և կանոնաւորեալ պահելու համար օրէնք դրուած է ամէն մէկուս, աշխատիլ հասարակաց օգուտը ձեռք բերելու, լուսաւորելով ընտանի, մխիթարելով, կրթելով և սիրելով զանոնք պարզ ու յստակ և սուրբ մտօք. և առաջնորդել նոցա առ Աստուած, ու դէպի հրապարակական կեանքը. բայց ոչ անոնց պէս, որոնք բարեկարգութեան և իրրու Ազգային օգտի և լուսաւորութեան պատրուակաւ՝ թշուառ Ազգերնուս ընտանի խաղաղութիւնն կը վրդովին, նոցա միաբանութիւնն կվնասկտեն, այլևայլ կողմնակցութիւնաց կը բաժնեն, և Ազգիս մէջ գտնուած իմաստուն և փառաւոր անձանց մեծ վայելչութիւնն ալ խորամանկ չարահոգութեան մատնելով՝ խիստ շատ անգամ, և դրէթէ բոլորովին կը կորսընցընեն ու անհետ կանեն. պժգալի՞ արատ։

Եւ ահա՛ այս ազնուական գնդեցիկ նպատակիս վերայ հիմնաւորուելով մարդկութեան պարտքերս ճիշտ կատարելու, արժանի կը համարիմ հրապարակական գովեստիս յայտնել մեր խորին շնորհակալութիւնքս ներքոյ նշանակեալ ազգասէր և պատուարժան անձանց, որոնք ընկերական գաշնագրութեամբ բարեհաճեցան իրենց թոշակով՝ տասըն օրիորդներ ,, Նոր Արշալոյս,, անուն Ուսումնարանն Հայ Աղջկանց. որ առաջինը եղաւ քաղաքիս մէջ, որոյ մասին խօսած եմք ,, Արարատ,, Ամսագ. 1869 թուոյն հրատարակութեանց միջոցին։

1 Տէրութեատ քաղ. Պօղոսեանց Մ. Բագրատ.
2 Պատ ղեաժ. Վարդանեան Մ. Համազասպ.
3 Դաւթեան Մ. Յովհաննէս.
4 Մուրատեան Մ. Յարութիւն.
5 Ղազանչի-պաշեան Մ. Յովակիմ.
6 Սառաֆեան Պ. Մարտիրոս.
7 Գէորգեան Պ. Մկրտիչ.
8 Շէկոյեան Պ. Յարութիւն.
9 Մխիթարեան Պ. Աղաթագ.
10 Տէր Մարգարեան Պ. Մարտիրոս.
11 Մարտիրոսեան Պ. Գէորգ.
12 Ծունանեան Պ. Աղաթագ.
13 Սողոմոնեան Պ. Յովհաննէս.
14 Կարապետեան Պ. Յակոբ.
15 Գասպարեան Պ. Աղէքսանդր.

Յիշեալ դպրոցի հիմնադիրն—Մեծապատիւ Պ. Պափայէլ Սաղամելեանց հասարակաց բարիքը իւր կամքէն վեր դնելով՝ առաքինասէր վարուք և բարուք և գովելի յատկութեամբք ամէն ջանք ի գործ կը դնէ ոգևորեցընել իւր Աշակերտուհիք լուսոյովին նոր կեանքով, և հանդիսացընել այնպէս, ինչպէս որ Եւրոպայի այժմեան դաստիարակութեան սահմանն ու ախորժակն է։

Չ՚նք կրնար չյիշեցընել այստեղ նա և Առաքինագործ Անձի մի՝ այսինքն է վեհանձն Մ. Վարդան Վարդանեացի Ազգասիրական խնամքն ու գործակցական սէրը՝ որ ունի մի և նոյն Դպրոցին վերայ իւր երբեմնակի այցելութեամբն. այս վեհամասիտ Իշխանաւորիս բազմարդիւն գործքերն՝ որ փառաւորել կուտան մեզ և Ազգին ընդհանրապէս, կը խօստանամք տալ հրատարակել ի ձեռն Ազգայնոց Ամենագոյդ յուսախութիւն և ի պարծանս ազգասէր և հայրենասէր անձանց՝ բազում իրաւամբ և պարծանօք իսկ կարեմ ասել, որ սա այն հարուստներէն չէ՝ ու չպիտի լինի, որոնք իրենց բոլոր կարողութիւնը երկու կանգուն կտաւի համար միայն դիզած են, և այնպէս բիրտ, ապուշ և վատ անուամբ կհրաժարուին յաշխարհէս, հապա՝ նորա բոլոր մեծութիւնը և ստացուածքն՝ այնպէս պիտի փիտանք ըստ հոգւոյ, որ իւր հետ հանելեաձել աշխարհքը պիտի վերափոխուի բարոյական առաքինութեանց վեհագոյն զօրութեամբն։

Ենգէնի Վարժապետ Մեծապոնեանց։

1870 յԱխալցխա

Պ. Խօջայեանց Յովհաննիսի հետևեալ գրութիւնը հրատարակելով՝ որ կը պարունակէ Հայաստանի հետաքրքրական առակներէն բաւական հաւաքում, յոյժ գոհունակ ենք բառից Թարգմանութիւնքն ևս յաւելլով՝ յաջորդ ամսագրոյս մէջ գ-է-ջի վերնագրով յօդուածն ևս կը հաղորդենք մեր ընթերցողաց։

Խմբագրո-ընեան Աբաթաց ամսագրոյ.

Պ. Մ. Մ. Մխանսարևանցի երգարանի պիտանաւորութիւնը արդէն ամենայն ուղղասէր անձինքներից, որոնց մտաւորական հայեացքը նորա վրայ ընկած են, զովուած է անկնճռօրէն. նա պարունակում է իւր մէջ ամենայն կարգի գրուածքները, որոնք մարդը կարդալով՝ ժամ առ ժամ իղձը կ'աւելցնայ, սիրտը կ'զուարճանայ, և օգտաւէտ առարկաներից նիւթ կ'քաղէ. պարզն ասեմ՝ նա իմ միայնութեան ընկերն է, նա իմ պարապութեան զուարճութիւնն է, մանաւանդ՝ երբ սակաւ ինչ ձանձրանալից զգնի՝ բաց եմ անում զուարճալի առածները, որոնք գտած են ածվում միշտ խօսակցութեան մէջ իբրև մի անհրաժեշտ ապացոյց ներկայ առարկաների, կամ իբր շուտով հասկացնելու նշանակ. կան այնպիսիքն էլ նրանցից, որոնք գտած են ածվում առ հասարակ խօսակցութեան մէջ իբրև ստորասութեան կամ բացասութեան մի գաղտնիք ներկայ առարկայումն, զօր. "Աստուած գիտէ". "ապրինք էլ՞". "Թէ սաղ ճնացի՞". "օրը գայ՝ բարին հետը", ևլն. ևլն.,

Այդպիսի առածներից յաճախ գործածական են այս տեղ մեզանում, և տեսանելով՝ որ շատերը մեր գիտցածներից չ'կան գրուած այն երգարանումը, օգտաւէտ համարեցի պատրաստել նրանք, (չ'հայելով՝ Թէ գտանվում են նրանցից քանիներումն օտարազգի բառեր, որոնք գլխաւորապէս զարդ են շարադրութեանը, և ոչ աւելորդ կամ անտեղի) և ահա այս գրութեանս հետ պատիւ ունիմ խոնարհաբար առաջի առնել Խըմբագրութեանդ Աբաթաց ամսագրոյ, որպէս զի՝ եթէ կ'բաղդատուրուին նորա՝ Ձեր բարեհաճութեամբը՝ արձանացնէք ի տիպ։

Յովհաննէս Խօջայեանց.

ՅԱ.գէ+սանդրապօլ։

Առակը անխոտելի է։
Ալևին 1) հինք լալում՝ վալևին 2) եկաւ հարսնեւով։
Ակաս մնակաս՝ էդ էր պակաս։
Ախոռումը քնել, սուլթան Մուրատին երազումն է տեսնում։
Անձը բօղազից 3) է յառաջ գնում։
Աղուէսը բաղարում 4) ի՞նչ բան ունի։
Աղուէսի փախուստը մինչև քիւրքճու 5) թուքանն 6) է։
Անասմբը չի՝ պատկառում՝ Թէ հին շորեր էլ հագնի, պէտք է ծումկի, հագարտանայ։
Այնքան չեղար ինձի պէս, ինձ էլ արիր քեղի պէս։
Այնպէս Թուրքացար, որ Հօրդ խաչն էլ մտահան արիր։
Ագռնիկը պսակուել ուզելիս՝ տան կճուճներն է կոտրտում. տղայն ուզելիս՝ օտարութիւն է փախչում։
Ամենը իրան տունը, ոսկի անտուկը մեր տունը։
Ամեն մարդ իրան գրածը լաւ կ'կարդայ։
Անունը կայ՝ ինքը չ'կայ։
Անժամանակ խօսող խօրոզի 7) գլուխը կտրում՝ ճն։
Անունդ գառ. Հանէ, պղտց ոչխարը կ'ի՞ր։
Անցանք գարձանք՝ մեղայ Աստուծոյ։
Անօթի հաւը երազումը ցորեան է տեսնում։
Աշխարհի մալը 8) աշխարհում կ'մնայ։
Աշխարհի վայելչութիւնը մի ռամիկ է ֆայլում. ալքայքը իրանց գահերում միայն մի լոկ պատերազմում են։
Աշխարհքը իմաստուն Սողոմոնին չէ՞ մնացեր։
Աղջկայ տունը գափ ու զուռնայ 9). տղի տունը ոչ ինչ չ'կայ։
Ամենի գլխին մի սանտր է յարմարցուցել։
Այլոց համար լաց լինողը իրա աչքերից կ'զըկուի։
Աչքը տեսածին է վախենում։
Ապրինք էլի՞։
Աստուած գիտէ։
Աստուած վատը կ'ճանաչէ։
Առատիցը մեկ, ապահիցը երկուս են գնում։
Ապրի մեռած մօրքուրդ։
Ապրանքը մուխանաթի 10) չէ, տեղն է մուխանաթի։
Աստղին լսող պէտք է։

---

(1) Յատուկ անուն է Տատիպաց. եւ կինշանակէ ձի, քաջ Լշ
(2) Գ-ա-ա-ա-պ-ա, ն-ա-ն-ք-ա-պ-ա Լշ.
(3) Կ-ո-ղ-ջ։
(4) Վ-ա-ճ-ա-ռ-ա-ն-ա, շ-ո-կ-ա։
(5) Մ-ո-շ-ա-կ-ո-ր-ճ, մ-ո-շ-ա-կ-ա-կ։
(6) Տ-է-ւ-է-ան, խ-ա-ն-ո-ւ-ր։
(7) Ա-ֆ-ղ-ը, ա-ֆ-ղ-ա-ղ։
(8) Ի-ն-դ, ա-պ-ր-ա-ն-ք, ա-ս-ա-յ-ո-ա-ծ։
(9) Փ-ող։
(10) Ն-է-ն-ֆ-ո-ր, ա-պ-ք-ա-պ։

Արիւնը տեղը չի մնալ, միայն թէ համբերութեամբ։
Արջին կալումը լուծ անիլ տալը հեշտ է, բայց՝ աղբը վեր առնելը դժուար է։
Արջը մէշիցը 11) խոովել է, մէշէն երբէք խաբար 12) չունի։
Արևը չ'ծագած՝ ինչէր կ'ծագին։
Արքայ մի՛ հպարտանար, քեզնից մեծ Աստուած կայ։
Ամեն մարդ՝ կրակը իւր բաղարջի տակն է քաշում։
Ասացի չասացի։
Աւեր ջաղացի օրուըն 13) ի՞նչ է, առուն ի՞նչ, անօգուտ հարստի աղքատին օգուտն ի՞նչ։
Աւեր քաղքին շէն անուն։
Ամեն մարդոյ սրտումը մի առիւծ է պառկած։
Բալի 14) ծառին շան գլուխ։
Բախալ 15) արդար տուր՝ արդար ա՛ռ.
Բաղնիքում խաղ ասելը, օտար տեղում ապրծնելը, դարիցը վեր ձի քշելը։
Բաղնիք գնալիս՝ ղուռնին 16) է զնայում, Հարսնիք գնալիս՝ ղուռնին։
Բամբասանք չէ՛, բանն ասանկ է։
Բանը չաթալ 17) է եղել, գրքերը վար իջուցէք։
Բարեկամի հացը պատճառներով են ուտում։
Բարեկամը գլխին է նայում, թշնամին ոտքին։
Բարի գաւակը օրօրոցիցն է յայտնի լինում։
Բերին՞ բերես՝ դանակը պոչին կտրում են։
Բոլորը մօրս խաթրըն 18) են հարցնում, Հօրս հէչ 19) չ'կայ։
Բրդողը գիտէ, ուտողն ի՞նչ գիտէ։
Գաթէն ծոցդ պա՞ս ես պահում։
Գայլից վախեցողը ոչխար չի՛ պահում։
Գայլը սովածութիւնից դարիցը չի՛ կարում ելլել, ասում՝ են անտէրը որքա՞ն կերել է։
Գայլի ահիցը գող չ'լինո՞ղ։
Գայլի տարածը Հօրը Հոգուն հաց է սեպում։
Գարի հաց՝ թթիու Լման, պապա՞ ուտէ երթայ գուլման։
Գնտը անցանք, առուն խեղդուինք։
Գժութիւնը խփելով, մարդկութիւնը տալով կը լինին։
Գիշերը չի՛ ուղում քնիլ, առաւօտը չի՛ ուղում վեր կենալ։

(Մնացորդն է յաջորդս։)

(11) կաղնի, և երբեմն ինչանակէ անտառ.
(12) Լո՜ւր, լ՛սոց։
(13) Խողովակ, առու՜, ջրի ո՜ղի
(14) կեռասս, կեռասենի,
(15) Նպարավաճառ։
(16) Աղբի՜ւր
(17) Երկի՜ղ պարակոյղ։
(18) Սիրտ, կամ, ախոռածո՜ւիւն, սէր Աստ։
(19) Ամենևին, երբեմ։

Յանցելուսն ի Թերա Ա. Պօլսոյ հրկիզութենէ վնասեալ Ազգայնոց համար Վ. Հ. Պաթողիկոսի կողմանէ Ռուսաստանի մեր Ազգայիններէն նպաստ հաւաքելու արդէն ուղղուած յորդորական կոնդակները յայտնի են, որով բացի յայլոց՝ Գ. Վլալր քաղաքի մէջ գտնուած բարեսնպատակ երիտասարդաց խումբն ևս հետևեալ գրութեամբ 370 րուբլի փութացած են յղել առ Տօրին Վ. Հ. Օծութիւնն առ ի հասուցանել ի նպաստ վերոյիշեալ Թերայնակ Ազգայնոց։ Կըգովեմք նոյն երիտասարդաց ազգասիրական ճշմարիտ զգացմունքները հանդերձ շնորհակալութեամբք։

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՀԱՑՐԱՊԵՏ

ԵԻ ՎԵՀԱՓԱՌ ՅԻՐ ՄԵՐ.

Ցաւ մեծ զգացեալ յանձինս մերում ի լսին մեր զգառնաղէտ պատահար հրկիզման սիրելի համազգեաց մերոց որ ի Թիրայ Մոստանդնուպօլսոյ, որոց եղկելի թշուառութիւնք՝ զորս համայն մի առ մի նկարագրեցին Ազգայինք և Եւրոպական լրագիրք, արդարև ի սիրտս մեր անցան, և ետուն մեզ զառիթս անհնարին վշտակցութեան ընդ տարաբաղտութիւնս նոցին։ Առ որ զայս բան ի սուրբ կամս նախախնամութեան Աստուծոյ, որ գիտէ հարկանել և կեցուցանել, մեք տարաբնակ եղբարքս ապաքաղաք վիճակի դիպեալ ազգակցաց՝ և հարազատ որդիքս Հերոյին Վերափառութեան ոչ կարելով անզգայաբար տանել զնեղութիւնսն յիշեալ եղբայրակցացն մերոց՝ և անտարբեր մնալ ի նոյն, ուստի փոյթ յանձին կալաք շտապողական կատարել զպարտիսն՝ առ ազգն մեր. որ և կամեցաք ըստ մերովսանն կարեաց ազգասիրաբար օգնել նոցա ի հեռուստ։ Ծորոյ սակս խումբ մեր՝ որ կազմի յոմանց երիտասարդաց քաղաքիս՝ կամեցաւ առ ի կարեկցաբար նպաստաւորել տարաբաղդ հրկիզեալ ազգայնոցս տալ երկուս Թատերական ներկայացմունս, որք եղեն ի 17ն և 30ն անցելոյ ամսեանն օգոստոսի, յորոց վաստակեցաք զերկուս հարիւր յիսուն ռուբլիս արծաթոյ։ Բայց զայս ոչ բաւական համարեալ՝ ժողովեցաք ի միմեանց զյիսուն ռուբլի, և դիմեցաք նախ քան զոյն ներկա-

յացմունսատ. քաղաքացին մեր Պ. Մարգար Մամաջանեանցն՝ որ գտանէր ի Տօնաւաճառին Նիժնայի, ղի յորդորեցէ զմեզայինն՝ որք անդ գտանէին՝ ի նպաստաւորութիւն այսմ նպատակի։ Ի նմանէ ընկալաք զեօթանասուն ռուբլիս։

Ահաւասիկ միաւորեալ ջոյսօսիկ գումարս, առաքեմք առ Սրբութիւն Ձեր իբրև տուրք եղբայրական սիրոյ և կարեկցութեան, որպէս զի Դուք՝ Վեհափառ Տէր, Ձերոյին աղգանման տնօրէնութեամբ բարեհաճեսջիք հասուցանել զընչին վաստակս մեր ի Կոստանդնուպօլիս ի նպաստ և ի դիւրութիւն Թշուառացեալ Ազգայնոց մերոց։

Ուստի հայցելով զՀայրապետական օրհնութիւն Ձեր՝ մնամք բաւարար տնօրէնութեան Ազգանամ Հօրդ Համայն Հայկազնեից և Վեհափառ Տեառնդ ամենահնազարհ որդիք՝

Օբէոդ Թոմոյ Ալանեանց
Տէյէն Կապաբճեան Աբեղեանց
Օբէոդ Մարկոյ Գալպեանց
Օբէոդ Անոա Ազբեալեանց
Յովհաննէս Աբեղեանց
Բժիշկ Անանիա Սուլեան-Շահ.
Ատոռաֆատուր Կոճիճեան
Գաբրիէլ Դուլճեանց
Յովհաննէս Քուչուքեճեանց
Մովսէս Բօղոսլեանց
Մովսէս Իսահակեանց
Ս. Ղազարեանց
Գրիգոր Ազբեալեանց
Մինաս Բեհանեանց։

1870 ապրիլ 29-ն Հոկտեմբերի
ի Գղզար։

3 Հոկտ. 1870

. . . Խմբագիր.

Ի 13 սեպտեմբեր 1870 թիւ 187 Պասիրեմ տաճկերէն լրագրոյն մէջ հրատարակուած հետաքրքրութեան արժան պատմութեանական յօդուածը կարևոր գտեալ թարգմանել Հայերէն, ինչ ինչ մանր ծանօթութեամբ, յաւելուածոք և դիտողութեամբ։ Խնդրեմ որ օգտաւէտ Մանզումիդ մէջ դետեղել հաճելով զայն՝ շնորհ ընէք հրատարակել։

Մնամ և այլն Հ. Փառանձեան

Ալման բառը զերմաներէն ժողովրդոյ նշանակող և մարդ նշանակող Ման բառերէն բաղկացեալ լինելով՝ կ'յայտնէ ժողովրդոց և ազգութեան կարգին մէջ մտնող հատարակութիւն մը։ Ալմանք ի հնումն Ասիայէն եկած են Եւրոպա։ Ալման բառը նաև Թիւրքմէն, (որ անտարակոյս մեր Թորգոմեան բառն է) և Էրման, (որ թերևս Արմէն կամ Էրմէնի անունն է) բառերուն պէս (1) Թուրքերէն լեզուէն լինելով արմատները, էյլ (ալէկ), այսինքն խմբովին մէկ տեղ ժողոված ցեղ մը մարդիկ կը հասկացուի։

Ալման բառին միւս անունն է Ժերմէն, որոյ ուղիղ արտասանութիւնն է Եռման, պատերազմի նշանակութիւն ունենալով, ըսել է պատերազմող մարդիկ։ Հռովմայեցիք թէպետև կ'գործածէին այս բառը, բայց ստոյգն եղած է պատերազմող բառն է, և էր՝ մարդ նշանակելուն համար, հաւանական է թէ արմատն եղած լինի (2) Թուրքերէն լեզուէն. «բայց ըստ մեզ էր՝ Հայերէն այլ բառն է՝ որ կը-նշանակէ մարդ և ոչ թէ Թուրքերէն բառ է։

Ալմանք ինքզինքնին և երկիրնին ոչ կ'անուանեն Ալման և ոչ Ժերմէն կամ Եռման, այլ միայն կ'գործածեն այս անուններն երբեմն իբրև ոճ. քանզի բուն իսկ Ալմանիան՝ Մային գետոյ եզերքը լինելուն պատճառաւ, այն տեղերուն ևս կ'ըսեն երբեմն Ալմանիա. այլ սակայն իրենք իրենց յատկացուցած անունը Տայճ լինելով, իրենց երկրին կ'ըսեն նաև (3) Տայճլանդ, և սոյն Տայճ բառը յայտնի է թէ ծագած է Մաւէէ գետոյ տրուած Տաճիկ անունէն, որէ Հայերէն բառ։

Ինչպէս որ Ալմանիայի ընդհանուր անունը Թուրքերէն լեզուէն ծագումն առած է, նոյնպէս երեսմըն քաղաքաց անուններն ևս փոխանցուած է Ասիոյ երկրէն, զորօրինակ՝ Սաքսօնիայ անունը՝ Մաւէէ գետոյ մօտն եղած Սաքսիանէ ըսուած տեղին մօտը լինելով՝ Սաքսիանէ հոչակուած լինելէն առնուած է։

Սակայն կան նաև ուրիշ երկիրներ, որ առած են իրենց մէջ բնակեալ ցեղերուն անուններէն, ինչպէս Գռանքլանտ, (որ Պատրնի և Հէսի կողմերը՝

1) Հրատարակիչը կսխալի Ալման եւ Էրման բառերը «Թուրքերէն բառերու արմատներ են» ըսած խօսքին մէջ։

2) Թուրք ազգն ու իր լեզուն Հայոց ու Ալմանաց ազգերէն ու լեզուներէն հին լինելուն վրայ չունինք պատմական տեղեկութիւն մը։

3) Լանդ կնշանակէ Գերմաներէն լեզուաւ երկիր։

Ուէն գետոյ եղերքը իւր մշտնջենաւոր անունն է՝) Գռանք ցեղին անունէն առնուած լինելով, կը նշանակէ ալա և (4) մեր լեզուաւ կ'ըսուի Գունկ, որ Փրկչական թուականէն մինչև Համնի նոյն թուականը՝ Գալիա (և ի հնումն Կալուա ղոր մէք ևս կ'անուանենք Հայերէն մինչև ցարդ Գաղղիա) ըսուած Գռանսան պաշարեցին Գռանքները. և ահա այսպէս այդ երկրին մէջ մնաց իրենց անունը, վասնորոյ և կ'ըսուի Գռանսա։

Աչմաներէն Ֆամըռ (փէտէր) հայր, մուռմո (մատէր) մայր, պռուտըռ (պրատէր) եղբայր, և տուխտըռ (տուխթէր) դուխռէ բառերուն պէս կան շատ Պարսկերէն բառեր. մանաւանդ Աչմաներէնի դերբայերը կ'վերջաւորին (թէն) ով, ինչպէս որ կը վերջաւորին Պարսկերէն դերբայերը։

Մենք ևս յառաջ կ'բերենք աստանօր մեր դիտողութիւն այսպէս. ((տուխթէր) Պարսկերէն պաղչէ ըսել է. Խոսրովխոսով՝ կնշանակէ Հայերէն խոսրովէ պղչէ. (հէվթ) եօթը. (պիժիշկ) բժիշկ. ճա((վիտան) յաւիտեան, (չար) չորս. (շերին) պերճան. ((քէվթան) կարծած. (ճէտ) դեղ որ կ'ըսուի նաև ((Հայերէն ճէտ, և այլ բազում պարսկերէն բառեր, ((որոնց հնչմունքն ու արտասանութիւնը կընմանին ((Հայերէն բառերու։ Այսնմանութեան նկատմամբ, ((ամենէն աւելի հետաքրքրական և ուշադիր լինելու կէտն այն է թէ, Հայերէնն է աւելի հին կեղու՝ թէ պարսկերէնը, և հետեւաբար Հայք ((աւելի հին ազգ են, թէ պարսիկք. այս հարցումն է խնդրոյն լուծանգութիւն, որ կամ ((Հայք Պարսիկներէն, և կամ Պարսիկք Հայոցմէ ((առած լինին իրենց լեզուին շատ մը բառերը։ ((Սակայն ըստ մեզ դիւրին է խնդրոյն լուծումը ((երկու ապացուցութեամբ, այսինքն առաջին՝ երբ կընինիմք այնպիսի բառից արմատներուն մըտադիր՝ ((զորօրինակ (շերին) պարսկերէն, և սիրուն Հայերէն բառից մէջ. «էրուն բառին արմատն է «էր ((բառը, մինչդեռ (շերին) բառին արմատը՝ եթէ ((ըսենք (շեր) այս մնօք երբէք չէնշանակեր բան ((մը, բայց (շեր) ուրիշ իմաստով կ'նշանակէ առ((ջ։ Նոյնպես բժիշկ բառին արմատն է բուժ ((ական բուժել զորօրինակ՝ բուժիկ, անբուժելի և ((ամենաբուժ, այսպէս նաև Հայերէնի նմանութիւն ((ունեցող պարսկերէն բառից շատերուն արմատները կ'գտնենք Հայերէն։ Երկրորդ՝ եթէ Հայկ էր ((նոյայ Թոռան Թոռը և Թորգոմայ որդին, ու ((Հայկազունք կ'կոչուէին այն ժամանակն արդի Հա((յերէնը կամ նորա խիստ մօտ լեզու մը, ուրեմն ((անհնար կ'երևի թէ Պարսիկք և իրենց լեզուն՝ ((Հայոցմէ և Հայերէնէն աւելի հին եղած լինին։ ((Արդ եթէ Պարսիկք Հայոցմէ հին ազգ չէին, ու((րեմն ուրիշ ազգեր և իրենց լեզուն ամենեւին ((անկարելի կըթուի լինել Հայոց ազգէն հին։»

Աչմանիոյ և յատկապէս Աւստրիոյ արևելեան երկիրներուն մէջ հռչակուած Նէմցէ անունը կ'նշանակէ Սլաւերէն լեզուաւ համր կամ անլեզու, որովհետեւ Սլաւք, այսինքն Ռուս, Ճաճառ, Սերվիացի, (Պուլկար) և Խրվաթ ժողովուրդք, իրենք իրենց Սլավ՝ այն է խօսող նշանակող անունը տալով, ինչպէս որ ինքզինքնին կ'յայտնեն իրարու հետ խօսելնուն համար քաղաքակրթեալ և ազգայնութիւն ունեցող ժողովուրդ, զարմանալի կամեր են Աչմաններն ու Աւստրիացիք խօսելէ, քաղաքակրթութենէ և ազգայնութենէ։

Մանր-ե. ԹՒ- 1370

4) Հրատարակիչն ըսած է Տաճկերէն լեզուին համար։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ԾՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻՒ։

Հոկտ. 7 — Սինօդի Ս. Էջմիածնի նորոգ անդամ կարգեցան Արժ. Մեսրովբ Սմբատեան և Ծովակիմ Տէր-Գրիգորեան Վարդապետք ի տեղի Գեր. Ծովհաննէս Արշակեանի և Թադէոս Զիւնականեան պիսկոպոսաց։

,, 16 — Արժ. Կարապետ Վարդապետ Տէր Գալստեանց ի պաշտօնէ Փոխանորդութեան Աղէքսանդրապօլոյ հրաժարեցուցեալ առաքեցաւ ի միաբանակցութիւն Ս. Վանուցն Գեղարդայ։

,, 23 — Շամախւոյ վիճակի Աւանաշէն գեղջ Աստուածատուր Քահանային վասն հանգանակեալ վարուց և անուղղայ ընթացից՝ դադարեցուցանելով ի քահանայագործութենէն՝ ենթարկեցաւ եկեղեցական ապաշխարանաց ներքև մինչ յուղղութիւն վարուցն։

,, ,, — Աղէքսանդրապօլոյ Աբրահամ Քահանայն Գրիգորեան հանգանակ կանոնաց Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ խարդախ ազանգրութեան աղագաւ քահանայագործութենէն արդելլով՝ առ դրան եկեղեցւոյ միամեայ ապաշխարանաց ենթարկեցաւ։